

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ԻԴ. ՏԱՐԻ ԹԻԻ 41 (1741) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 7, 2015  
VOLUME 35, NO. 41 (1741) SATURDAY, NOVEMBER 7, 2015



Պաշտօնաթերթ՝  
Ս. Գ. Հնչակեան Կուսակցության  
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly  
1060 N. Allen Ave. Suite 101  
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Յաղթանակ, Որ Համազօր է Պարտութեան

Այս տարուայ Յունիսին տեղի ունեցան բուրբիոյ խորհրդարանի ընտրութիւնները, որոնց ընթացքին նախագահ Ռէնէֆ Էրտողան եւ իր գլխաւորած Արդարութիւն եւ Զարգացում կուսակցութիւնը կը յուսային, ոչ միայն պահել իրենց առաւելութիւնը, այլ նաեւ ձեռն ձգել երկու երրորդ մեծամասնութիւն, փոխել սահմանադրութիւնը եւ Էրտողանը դարձնել միահեծան ղեկավար: Սակայն, այդ ընտրութիւնները մեծ ապտակ մը եղան Էրտողանին անձնապէս եւ իշխող կուսակցութեան ընդհանրապէս: Քրտամէտ ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութիւնը կարողացաւ առաջին անգամ ըլլալով մուտք գործել խորհրդարան եւ իշխող կուսակցութիւնը գրկել, 13 տարիներու վրայ երկարող մեծամասնութիւնէն:

Համախոհակամ կառավարութիւն կազմելու ձեւակամ փորձերը աւարտել են, նշանակութեան երկրորդ ընտրութիւններ, որոնք տեղի ունեցան անցնող Կիրակի՝ Նոյեմբեր 1-ին: Իշխող կուսակցութիւնը մասամբ հասաւ իր նպատակին: Ապահովեց առանձին կառավարութիւն կազմելու համար անհրաժեշտ թուաքանակը, սակայն ոչ բաւարար՝ սահմանադրութիւնը փոփոխութեան ենթարկելու:

Այս արդիւնքին հասնելու նամբուն, Էրտողան Բալիկ հարիւրաւոր անմեղներու դիակներուն վրայէն: Տեղի ունեցան կասկածելի պայքարներ, իսլամական պետութեան դէմ պայքարի պատրուակին տակ թրփակեց օդանաւերը հարուածեցին Քուրտ յեղափոխականներու դիրքերը, վերջ տալով փոխուն գինադադարին, վերսկսելով պատերազմը երկու կողմերուն միջեւ: Սուրիացի գաղթականներ Բալիկ յեղափոխականներու դէպի Եւրոպա, նախապահին անոնցմէ շատեր կորսնցնելով իրենց կեանքը՝ միջերկրական ծովի ալիքներուն մէջ: Հալածանք շղթայագերծուեցաւ ընդդիմախօսներու դէմ, փակուեցան լրատուամիջոցներ, տնտեսութիւնը յայտնուեցաւ ծանր վիճակի մէջ: Այս ու նման բազմաթիւ երեւոյթներ վախի մթնոլորտ յառաջացուցին հասարակութեան մօտ, որոնցմէ շատեր ակամայնախընտրեցին իշխանութիւնը տալ Էրտողանին, քան թէ վտանգել իրենց բնականոն կեանքը:

Այս բոլորը անկկատ պիտի չմնան, միջազգային ու յատկապէս Եւրոպայի հանրային կարծիքին մօտ, որ եկաւ անգամը եւս տեսնելու բուրբիոյ իսկական դի-

Շարք էջ 4

## Ուրը Հայեր Զոհուած են Մոսկուա-Երեւան Մարդատարի Արկածի Հետեւանքով



Մոսկուա - Երեւան մանապահին վրայ շրջուած մարդատարը

Նոյեմբեր 3-ի գիշերը Մոսկուա - Երեւան երթուղիի վրայ, Տուլայի մարզի մօտ տեղի ունեցած մարդատարի արկած հետեւանքով զոհուեցան ութը հայ ճամբորդներ, որոնց թիւը կրնայ բարձրանալ, նկատի առնելով որ կան նաեւ ծանր վիրաւորներ:

Մարդատարին մէջ եղած են 61 ճամբորդներ, որոնցմէ 13-ը չեն տուժած կամ ստացած են թեթեւ վնասուածքներ: Մնացածը փոխադրուած են Տուլայի մարզի տարբեր հիւանդանոցներ:

Ռուսաստանի իրաւապահները կը քննարկեն երկու վարկած՝ պատի անսարքութիւնը եւ մարդկային գործօնը: Երկու վարդոյնները չեն տուժած եւ փոխադրուած են Տուլայի ոստիկանութիւն, ուր հարցաքննութեան ենթարկուած են:

Արկածի կապակցութեամբ Հայաստանի մէջ ստեղծուեցաւ պետական յանձնաժողովը, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ

Բեգլարեանի գլխաւորութեամբ: Բեգլարեան եւ առողջապահութեան նախարար Արմէն Մուրադեան մեկնեցան դէպքի վայրը, իրենց ուսուցող զոհերին երեւոյն հետ համակարգելու զոհուած ուղեւորներու աճիւնները Հայաստան տեղափոխելու, սուժած քաղաքացիներուն եւ անոնց ընտանիքներուն անհրաժեշտ օգնութիւն ցուցաբերելու նպատակով:

Պաշտօնական տուեալներով վթարի հետեւանքով զոհուած են Յակոբեան Գառնիկ Գուրգէնի (1961-ի ծնունդ), Բաղալեան Հրաչ Արտաւազի (1981-ի ծնունդ), Մանուկեան Գագիկ Արմէնի (1961-ի ծնունդ), Ստեփանեան Վարուժ Ստեփանի (1954-ի ծնունդ), Նալբանդեան Սպարտակ Յոլակի (1947-ի ծնունդ), Ալիխանեան Յակոբ Լիւդվիգի (1960-ի ծնունդ), Յովհաննիսեան Հայկ Ժորայի, Յովհաննիսեան Արտաշէս Աւետիքի (1980-ի ծնունդ): Հիւանդանոցներու մէջ բուժում կ'ստանան 33 հոգի:

## Հայաստանի Բնակչութեան 43%-ը Զուգեր Հեռանալ Երկիրէն

«Ինտեգրացիոն Պարոմէթր» հետազօտական ծրագրի այս տարուայ հանրային կարծիքի ուսումնասիրութեան արդիւնքներուն համաձայն, Հայաստանի բնակչութեան 18.4 տոկոսը կը փափաքի մնալուն բնակչութեան մեկնել Ռուսաստան, 11.7 տոկոսը՝ Միացեալ Նահանգներ, 11.0 տոկոսը՝ Ֆրանսա, իսկ 43.7 տոկոսը չի չի փափաքիր լքել երկիրը:

Հարցախոյզին պատասխանողներու 27.2 տոկոսը կը փափաքի ժամանակաւոր աշխատանքի մեկնել Ռուսաստան, 15.9 տոկոսը՝ Գերմանիա, 15.3 տոկոսը՝ ԱՄՆ, 15.1 տոկոսը՝ Ֆրանսա, 5.5 տոկոսը՝ Մեծ Բրիտանիա, 3.4 տոկոսը՝ Վրաստան, 1.4 տոկոսը՝ Հնդկաստան:

Մասնակիցներու 28.1 տոկոսը պատասխանած է, որ չուզեր այլ երկիր մեկնել ժամանակաւոր աշխատանքի համար:

Ռուսումնասիրութեան այլ հարցումներուն համաձայն, հարցա-



խոյզին մասնակցած 1105 քաղաքացիներու 58.9 տոկոսը կը խորհի, որ հնարաւորութեան պարագային կը նախընտրէ որ, Հայաստան միութիւն կազմէ Ռուսաստանի հետ:

Մասնակիցներու 28.1 տոկոսը կը կարծէ, որ Հայաստան ոչ մէկ պետութեան հետ պէտք չէ միաւորուի:

Եւրոպական Միութեան հետ միաւորուելուն կողմնակից են 8.2 տոկոսը, 1.3 տոկոսը՝ Վրաստանի, 1 տոկոսը՝ Պելաուսի:

## Ապտուլլահ Կիւլան Ապօրէն Կերպով Ֆինանսաւորած է Գոնկրէսի Անդամներու Այցելութիւնները Թուրքիա



Ամերիկաբնակ Թուրք մեծահարուստ՝ Ապտուլլահ Կիւլան

Ամերիկաբնակ Թուրք մեծահարուստ՝ Ապտուլլահ Կիւլան 2008-էն առկին կազմակերպած ու ֆինանսաւորած է Ամերիկացի Գոնկրէսականներու եւ կամ անոնց աշխատակազմի անդամներու շուրջ 200 այցելութիւնները Թուրքիա: Այս մասին կը հաղորդէ «USA Today» օրաթերթը, աւելցնելով թէ այս այցելութիւնները հաւանաբար խախտած են Գոնկրէսի ներ-

Շարք էջ 5

## «Թելեթոն-2015»-ը Նոյեմբեր 26-ին



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աւանդական թելեթոնը այս տարի տեղի կ'ունենայ Նոյեմբեր 26-ին եւ կը կրէ «Մեր Տունը» խորագիրը:

Հիմնադրամի հրապարակած հաղորդագրութեան համաձայն՝ «Թելեթոն-2015»-ի գլխաւոր նպատակն է բնակարաններով ապահովել հինգ եւ աւելի երեխայ ունեցող բազմազաւակ ընտանիքներուն:

«Հեռուստատարութիւնը կը մեկնարկի Երեւանի ժամանակով ժամը 22:00-ին եւ կը շարունակուի մինչեւ առաւօտեան ժամը 10:00-ը: Տարուայ գլխաւոր դրամահաւաք միջոցառումը կը հեռարձակուի Հայաստանի հանրային, «Արմէնիա», «Շանթ», «Երկիր Մեզի» հեռուստալիքներով եւ ինտերնետային կայքով՝ [www.himnadram.org](http://www.himnadram.org) եւ [www.armeniafund.org](http://www.armeniafund.org) կայքերի միջոցով», - ըստած է հաղորդագրութեան մէջ:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Օլիգարխների Վերջնագիրը  
Վարչապետին  
Կամ 700 հազար «Այո»-ի Պիւտճէն

ՅԱԿՈՒԲ ԲԱԴՆԱԼԵԱՆ

«Արտաքին պայմանների նման վատթարացման դէպքում հանրային բարեկեցութեան միակ ճանապարհը ներդրումների խթանման եւ տնտեսական աճի ապահովման միջոցով աշխատատեղերի ստեղծումն է: Հարկ է հնարաւորինս խթանել հայրենական արտադրողին, խրախուսել արտահանումը, ստեղծել երկարատեւ կայուն աճի նախադրեալներ», Նոյեմբերի 2-ին ասում է Յովիկ Աբրահամեանը, խորհրդարանին ներկայացնելով 2016 թուականի պիւտճէի նախագիծը:

Թէեւ Յովիկ Աբրահամեանն այդ մասին ասում է խորհրդարանի յանձնաժողովի նիստում, բայց միեւնոյն է, հրատապ է հարցը, թէ ո՞ւմ է ասում: Թէեւ, գուցէ այդ հարցն էլ վաղուց հրատապ է, որովհետեւ բոլորը գիտեն, հասկանում են, որ Յովիկ Աբրահամեանը պարզապէս ասում է, ինչպէս Հայաստանի ցանկացած բարձրաստիճան պաշտօնեայ՝ պարզապէս ասում են, որ պէտք է ստեղծել երկարատեւ աճի կայուն նախադրեալ:

Երկարատեւ աճի, աշխատատեղերի ստեղծման կայուն նախադրեալի մասին խօսում են մարդիկ, որոնք ի պաշտօնէ պէտք է ստեղծեն այդ նախադրեալները: Այդ նախադրեալ ստեղծելը նրանց գործն է, պարտականութիւնը՝ սահմանադրական պարտականութիւնը: Այդ մարդիկ պէտք է ոչ թէ ասեն, որ նախադրեալ ստեղծել է պէտք, այլ ներկայացնեն ստեղծած նախադրեալները: Ու ոչ թէ միջազգային այն զեկույցների տեսքով, թէ տեսէք ինչ հեշտ է Հայաստանում բիզնես սկսելը, այլ գործնական օրինակների, թէ Հայաստանում ինչ հեշտ է առանց տանիքի բիզնես վարելը: Վարելը, ոչ թէ մաքառելը:

Բայց Հայաստանում ստեղծել երկարատեւ աճի խթանման նախադրեալ, նշանակում է քանդել բոլոր այն նախադրեալները, որ իշխող համակարգը ստեղծել է երկարատեւ վերարտադրութեան համար, որը շարունակուում է արդէն առնուազն քսան տարի: Վերարտադրութեան առաջին «գիշերը» եղել է 1995 թուականին՝ խորհրդարանի ընտրութեան ու Սահմանադրութեան հանրաքուէի օրը: Դրանից յետոյ վերարտադրութեան գիշեր-ցերեկները շարունակուել են կանոնաւոր պարբերականութեամբ:

Չի կարող լինել իշխող համակարգի վերարտադրութեան նախադրեալների եւ տնտեսական երկարատեւ աճի նախադրեալների համատեղ գոյութիւն: Դրանք հակասում են իրար, կամ ինչպէս վերարտադրութեան նուիրեալներից մէկը կ'ասէր՝ «գենետիկորէն անհամատեղել» են: Վերարտադրութեան նախադրեալները ենթադրում են միայն դրա մասնակից սուբեկտների տնտեսական աճ, այսինքն ընտանեկան պիւտճէի, ընտանեկան տնտեսութեան աճ, որը կապ չունի հանրային շահի հետ:

Այդ աճից հանրութիւնը կա-

րող է օգտուել այնքան, ինչքանով որ ներգրաւուած է վերարտադրութեան նախադրեալների եւ դրանց վրայ կառուցող գործողութիւնների մէջ:

Ընդհանրապէս, Հայաստանի տնտեսութեան աճի մասին խօսելիս, շատ կարեւոր է գանազանել, թէ ինչ ենք ասում Հայաստանի տնտեսութիւն ասելիս: Մեծ հաշուով, Հայաստանի տնտեսութիւն ասուածը հենց քրէա-օլիգարխիկ համակարգն է: Այդ տնտեսութիւնը կ'աճի, թէ ոչ, միանիշ թիւով կ'աճի, երկնիշ, թէ եռանիշ, մեծ հաշուով Հայաստանի համար ունի քիչ տարբերութիւն, որովհետեւ այդ աճից հանրութեանը հասնում է այնքան բաժին, որքան պէտք է հանրութեանը վերարտադրութեան մեխանիզմին կապուած պահելու համար:

Հայաստանի տնտեսութիւնը հանրային տնտեսութիւն է, այլ մի քանի մարդկանց եւ ընտանիքի տնտեսութիւն է, որտեղ հանրութիւնը սպասարկող դերում է:

Հետեւաբար, տնտեսութեան այդ բնոյթի պայմաններում աճ հասկացութիւնն իսկ ունի նենգափոխուած բնոյթ: Հակառակ դէպքում, օրինակ մի քանի տարի շարունակ արձանագրուած երկնիշ տնտեսական աճի պայմաններում էջը կարող լինել 2008 թուական եւ Մարտի 1: Բայց իսկապէս կար երկնիշ տնտեսական աճ եւ նոյնիսկ միգրացիայի դրական սալտո: Այդ դուրսհանումն է մի քանի տարի ընթացող այդ աճը փաստացի էջը մեղմել իշխող համակարգի հանդէպ հանրութեան կուտակուած դժգոհութիւնը:

Հետեւաբար, երբ կառավարութիւնը յայտարարում է աճի նախադրեալներ ստեղծելու անհրաժեշտութեան մասին, դեռ մի կողմ թողած այն, որ ստեղծելու համար «ստեղծուածը» պէտք է գործ անի, ոչ թէ խօսի, պէտք է նախ տարբերակել, թէ ինչ աճի մասին է խօսքն ընդհանրապէս՝ հանրային, թէ՞ համակարգային:

Օրերս տեղեկութիւն էր տարածուել, որ Սահմանադրութեան փոփոխութեան «Այո»-ի ՀՀԿ շտաբի պետ Յովիկ Աբրահամեանը հանդիպել է ՀՀԿ մեծամասնական պատգամաւորներին, այսինքն օլիգարխիային, եւ խօսել հանրաքուէի համար 700 հազար ձայն բերելու անհրաժեշտութեան մասին: Իսկ այդ ձայները, ինչպէս յայտնի է, ձեռք են բերում խիստ կոնկրետ ֆինանսական ծախսի շնորհիւ: Հետեւաբար, կայ այդ ծախսը չեա բերելու խիստ կոնկրետ ակնկալիք:

Ըստ երեւոյթին, Յովիկ Աբրահամեանը «պիւտճէի շնորհանդէսին» փորձում է հաւաստիացնել, որ կառավարութիւնը կանի քայլեր, որպէսզի Հայաստանի տնտեսութիւնը տնօրինող համակարգը չեա բերի 700 հազար ձայնի ծախսը: Դա հնարաւոր է միայն աճի միջոցով, եւ օլիգարխիան ակնկալում է աճի նախադրեալներ, ինչն էլ խոստացում է նրանց «պիւտճէտային ուղերձով»:

«ԼՐԱԳԻՐ»

Համակարգային Փոփոխութիւն Տանող Եզակի Քայլի Հեռանկարը

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

Այն, որ քաղաքացիական անհնազանդութիւնը Հայաստանում հանդիսանում է իշխող համակարգի դէմ արդիւնաւէտ պայքարի գործնականում եզակի միջոցներից մէկը, եւ համակարգն իր ամենակուլ բնոյթով, մեծ հաշուով, չի թողնում դրան այլընտրանքային պայքարի որեւէ տարբերակ՝ թերեւս դժուար վիճելի է: Առաւել եւս, որ քաղաքացու անհնազանդութեան իրաւունքը սահմանադրական իրաւունք է, եւ այլ կերպ լինել էջը կարող, քանի որ հակառակ դէպքում իշխող ցանկացած մեծամասնութիւն կարող էր ցանկացած բան պարտադրել փոքրամասնութեանը:

Այդ տեսակէտից, համակարգի դէմ պայքարի քաղաքացիական անհնազանդութեան մեխանիզմի վերաբերեալ առաջարկները որեւէ կերպ պակաս իրաւական, պակաս սահմանադրական եւ նաեւ պակաս տրամաբանական ու ռացիոնալ չեն, քան պայքարի այլ առաջարկներ: Ի դեպ, դա նշանակում է նաեւ, որ պայքարի այլ առաջարկներն էլ որեւէ կերպ պակաս ռացիոնալ, տրամաբանական, հեռանկարային եւ անկեղծ չեն, քան քաղաքացիական անհնազանդութեան մեխանիզմի առաջարկը: Եւ այդ իմաստով, քաղաքացիական անհնազանդութեան մեխանիզմի ամենաբնորոշ գիծը լինելով իշխող համակարգի բնոյթի անհանդուրժողութիւնը՝ այդուհանդերձ, այդ գիծը չպէտք է տարածուի իշխող համակարգի դէմ պայքարի, համակարգային փոփոխութիւնների վերաբերեալ այլ առաջարկների հանդէպ:

Վերջին հաշուով, եթէ իշխանութեան համար պայքարում մրցակցութիւն չկայ, ու դա քաղաքական ասպարէզում անվիճելի-օրէն ընդունուած է որպէս Հայաստանի առաջընթացի եւ փոփոխութիւնների առանցքային խոչընդոտ, իշխանութեան ուզուրպացիայի (բռնատիրութիւն) հետեւանք, ապա դրանից եկող եզրակացութիւնը ընդգիծադիր ուժերի համար պէտք է լինի լիովին հակառակը, եւ այդ ուժերը համակարգի դէմ պայքարի մասով հանրութեանն ուղղուած իրենց առաջարկներում պէտք է ոչ միայն հանդուրժող լինեն այլընտրանքների հանդէպ, այլ, մեծ հաշուով, նոյնիսկ շահագրգռուած լինեն առաջարկների մրցակցութեան առկայութեամբ, քանի որ դա, մեծ հաշուով, ընդգիծադիր ուժին ճահճացումից, լճացումից փրկող իրողութիւն է:

Ընդհանրապէս, քաղաքական ասպարէզում ճահճացումն ու լճացումը յաղթահարելու կամ դրա վտանգը կանխարգելելու միակ գործուն մեխանիզմը քաղաքական մրցակցութիւնն է, ինչպէս տնտեսութեան զարգացման հարցում առանցքային, ելակետային հանգամանքը տնտեսական ազատ մրցակցութիւնն է: Բայց Հայաստանում չկայ քաղաքական մրցակցութիւն, կայ իշխանութեան ուզուրպացիա (բռնատիրութիւն), որը տեւում է արդէն աւելի քան երկու տասնամեակ: Դա բերում է նրան, որ Հայաստանում կայ իշխանութեան լիակատար ճահճացում, եւ իշխանութիւնը՝ անկախ իր ներ-

քին մղումների ազնուութիւնից (եթէ յարգենք ազնուութեան կամ անկեղծութեան կանխավարկածը, որքան էլ Հայաստանի իշխանութեան դէպքում դա անհնար է), չունենալով մրցակից, դառնում է իրականութեանը ոչ ադեկվատ բոլոր հարցերում: Իհարկէ, այլ հարց է, որ Հայաստանի իշխանութիւնն ինքն է իրեն զրկել մրցակիցներից, ընդ որում՝ ոչ թէ կառավարման գերարդիւնքով, այլ գերհակասահմանադրականութեամբ:

Այդ վիճակը՝ քաղաքական մրցակցութեան հնարաւորութիւնների երկտասնամեայ եւ աւելի երկար արգելափակումը, ճահճացման եւ ոչ ադեկուատութեան վտանգի առաջ է դնում նաեւ ընդգիծութեանը: Յաղթահարել գործող համակարգը բաւական դժուար է, առաւել եւս կայ մի քանի չստացուած փորձերի բացասական իմաստով ձնագնդի էֆեկտը՝ հիասթափութեան, յուսահատութեան, սեփական ուժերի անվստահութեան էֆեկտը հանրութեան շրջանում: Միւս կողմից՝ ընդգիծութեան մօտ էլ՝ անկախ մղումներից ու բնոյթից, առաջանում է ճահճացման «բնական» միջավայր՝ իշխանութեան զալը գործնականում չի ստացում, իսկ քաղաքական մրցակցութեան այլ ասպարէզ ուղղակի չկայ: Եւ այս իմաստով, ընդգիծադիր դաշտում առաջ եկող մրցակցութիւնը ինչ-որ առումով կարելու է իրողութիւն է, որի վրա ընդգիծադիր բոլոր ուժերը պէտք է թերեւս դողան, քանի դեռ գտնուած է յաջողութեան արդիւնաւէտ բանաձեւը:

Շաբ.բ էջ 20

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՍԲԱԳԻՐ՝  
SOPB. UNCUY QWZUSGBUS

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալսմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վոլոդիա Ալեքսեևիչի Ռեզնայսի Ե Յայտարարել

Ազատամարտիկ, 6,5 տարի ազատազրկման դատապարտուած Վոլոդիա Ալեքսեևիչի Ռեզնայսի 30-ին, անժամկետ հացադուլ է սկսել: Այս մասին NEWS.am-ի հետ զրույցում ասաց Վոլոդիա Ալեքսեևիչի կինը՝ Մարգարիտա Բաղդամեանը:

Մարգարիտա Բաղդամեանը նշեց, որ յանձնաժողովը այս անգամ նոյնպես մերժել է պատիժը կրելուց պայմանական վաղափես ազատելու, պատժի չկրած մասն աւելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին Վոլոդիա Ալեքսեևիչի հայցը, այդ պատճառով էլ նա հացադուլ է սկսել:

Յիշեցնենք, որ ամիսներ առաջ նույն յանձնաժողովը մերժել էր Վոլոդիա Ալեքսեևիչի վաղափես ազատելու հայցը:

Նշենք, որ Վոլոդիա Ալեքսեևիչի արցախեան ազատամարտի մասնակից է, եղել է Լեոնիդ Ազգալդեանի աջ ձեռքը, ունի 6 զուգակ, որոնցից 3-ն անչափահաս են, ընտանիքն էլ ծանր սոցիալական պայմաններում է ապրում:

Վոլոդիա Ալեքսեևիչը մեղադրուած էր խարդախութեան համար: Ըստ նրան առաջադրուած մեղադրանքի՝ նա 2000 դոլար կաշառք է վերցրել Հենրիկ Զաքարեանից՝ նրա թոռանը ժամկետային ծառայութիւնից ազատելու համար, եւ 500 դոլար է պահանջել Ալեքսեևիչի Մարգարիտայից նրա որդուն:



Ազատամարտիկ եւ Բաղախական քանտարկեալ Վոլոդիա Ալեքսեևիչ

զօրամասում համակարգչային օպերատոր նշանակելու հարցը լուծելու համար: Վոլոդիա Ալեքսեևիչը հերքում է մեղադրանքը: Նա եւ իր մարտական ընկերները կարծում են, որ սա քաղաքական հետապնդում է պահանջարկի գնդապետի դէմ՝ իրենց սոցիալական պայմանները բարելաւելու նպատակով ազատամարտիկների բողոքի շարժումը ղեկավարելու համար: Առաջին ատենի դատարանը 2014թ. Յուլիսի 17-ին Վոլոդիա Ալեքսեևիչին 6 տարի 6 ամիս ազատազրկման էր դատապարտել: Վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարանները մերժել են Վոլոդիա Ալեքսեևիչի փաստաբանի բողոքը:

Գազիկ Ծառուկեանի Ձեռնարկութիւններում «Եական Խախտումներ Չեն Յայտնաբերուել»

Գազիկ Ծառուկեանին պատկանող ձեռնարկութիւններում կատարուած ստուգումների արդիւնքում Ֆինանսների նախարարութիւնը խոշոր չափերի խախտումներ չի յայտնաբերել: Այս մասին լրագրողների հետ զրույցում յայտարարեց ֆինանսների նախարար Գազիկ Խաչատրեանը՝ ի վերջոյ փարատելով Սերժ Սարգսեանի՝ դեռեւս Փետրուարի 12-ին հնչեցրած մտահոգութիւնները:

Այս տարուայ սկզբին, երբ ոչ իշխանական ուժերը Գազիկ Ծառուկեանի գլխավորութեամբ Ազատութեան հրապարակում իշխանափոխութեան կոչեր էին հնչեցնում, Սերժ Սարգսեանը Հանրապետականի գործադիր մարմնի նիստում յայտարարեց. «Տարիներ ի վեր շարունակում են օդում կախուած մնալ չստուգուած լուրերը չմոծուած միլիարդաւոր դրամ հարկերի, տարեցների կենսաթոշակներից ու երիտասարդների կրթութեան իրաւունքից գողացուած միլիարդները չնչին, այսպէս ասած, «բարեգործութեան» անուան տակ քողարկելու մասին: Ես յորդորում եմ Հայաստանի Հանրապետութեան վարչապետին՝ յանձնարարել համապատասխան մարմիններին մինչեւ վերջ ու մանրամասն ստուգել այս լուրերի իսկութիւնը եւ բաց ներկայացնել բոլորին»:

Այս յայտարարութիւնից շուրջ 7 ամիս անց, երբ ԲՀԿ նախկին առաջնորդ Գազիկ Ծառուկեանն արդէն հեռացել է քաղաքականութիւնից, ԲՀԿ էլ կտրուկ փոխել է դիրքորոշումը եւ այլեւս պաշտպանում է սահմանադրական փոփոխութիւնները, ֆինանսների նախարար Գազիկ Խաչատրեանն յայտարարեց, որ առանձնակի մեծ խոշոր չափերի խախտումներ չեն յայտնաբերել:

Սերժ Սարգսեանը Շարունակում Է Լռել, Վերնախաւն Էլ Չի Կողմնորոշուում

«Ժողովուրդ»-ը տեղեկացել է, որ իշխանական վերնախաւում այդպէս էլ չեն կարողանում կողմնորոշուել՝ սահմանադրական փոփոխութիւնների քարոզարշաւին Սերժ Սարգսեանը պէ՞տք է մասնակցի, թէ՞ ոչ: Բանն այն է, որ մինչ օրս Սերժ Սարգսեանն իր կուսակիցներին այդ մասին ոչինչ չի ասել: Քարոզչութեան տեսանկիւնից Սերժ Սարգսեանի մասնակցութիւնն այդքան էլ ձեռնառու չէ, քանի որ ընտրողների հետ նրա շփումները, որպէս կանոն, աւարտուում են սկանդալներով: Միւս

կողմից, եթէ Սարգսեանն անձամբ մարզեր չայցելի, ապա իշխանական համակարգի մի մասը կարող է իմիջալոց մօտենալ սահմանադրական փոփոխութիւնների հանրաբուէին:

«Ժողովուրդ»-ը փորձել է Սերժ Սարգսեանի մամուլ խօսնակ Վլադիմիր Յակոբեանից պարզել ի վերջոյ, Ս. Սարգսեանը մասնակցելու է քարոզարշաւին, թէ՞ ոչ: «Նախագահի այցերի եւ հանդիպումների մասին տեղեկացուած է պարտաձ կարող եւ ժամանակին», - հակիրճ ասել է պարոն Յակոբեանը:

ՀՀԿ-ում Դեմ Են, Որ «Այո»-ի ճակատը Միասնական Իրականացնի Քարոզարշաւը

ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանն անձամբ դէմ է, որ «Այո»-ի ճակատը միասնաբար իրականացնի սահմանադրական փոփոխութիւնների քարոզը: Այս մասին նա Նոյեմբերի 2-ին յայտնել է NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում:

«Ես ի սկզբանէ դէմ եմ եղել դրան, որովհետեւ տարբեր քաղաքական ուժեր տարբեր մարտավարութիւն են տանում: Ի վերջոյ ընդդիմութիւն են եղել չէ՞, ընդդիմութիւն են, այսօր ինչ-որ մի աւերուելով՝ կարող են խառնաշփոթ առաջացնել», - նշել է նա:

Հարցին, թէ այդպիսով կը նոյնացուե՞ն իշխանութեան հետ, մինչդեռ արդիւնաւէտ է, որ «Այո»-ի քարոզն ընդդիմադիր դիրքերից անցկացնեն, ասաց. «Այո, նախ նման առաջարկութիւն չի եղել, որ մենք մերժենք կամ՝ ոչ, իրենք են ընտրել, որ առանձին իրենք պէտք է տանեն քարոզարշաւը: Ով է ասում, որ բոլոր դրոյթներին բոլորս միանման մեկնաբանութիւն ունենք, տարբեր մեկնաբանութիւններ կան: Դրոյթներ կան, որ մինչեւ այսօր էլ վիճելի են, նրանք իրենց մեկնաբանութիւնն ունեն, Հանրապետականը՝ իր: Ինչի մեր կարծիքը փաթեթներ է իրենց վրէժ, կամ իրենք՝ մեր: Մենք ասել ենք՝ մեր շտաբները բաց են, կարող էք փոխանակել ինֆորմացիա, բայց իւրաքանչիւր ուժ ունի իր մարտավարութիւնը»:

Հարցին, թէ կարո՞ղ են նրանք ինֆորմացիա փոխանակել

օրինակ արձանագրած ընտրակեղծիքների վերաբերեալ, ինչն օրինակ խոստանում է ԲՀԿ նախագահ Նաիրա Զոհրաբեանը: Վերջինս NEWS.am-ի հետ զրույցում ասել էր, որ լինելով «Այո»-ի ճակատում՝ անհազանգելու է խախտումների մասին նախկինի պէս:

«Ոչ միայն Բարգաւաձ Հայաստանը, ընդդիմութիւնը, Հանրապետականը, բոլորը պէտք է լծուեն ընտրակեղծիքների դէմ պայքարի գործին: Եթէ մայր օրէնքում ունեցանք նեգատիւ երեւոյթներ ու յանկարծ կասկածի տակ դրեցինք հանրաքուէն, բաւականին խնդիրներ կ'ունենանք, թէ՛ միջազգային իմիջի, թէ՛ հետագայում այն կիրառելու հետ կապուած»:

Մեր հարցին, թէ փաստօրէն ինքն էլ է անհանգստանում ընտրակեղծիքների հաւանականութիւնից, Բաղդասարեանը պատասխանեց. «Մենք անհանգստանում ենք սաղրանքներից, որ յանկարծ սաղրիչ գործողութիւններ չլինեն: Որ տեսնեն ամէն ինչ նորմալ է ընթացում, կարող են այնպիսի նեգատիւ երեւոյթներ ստեղծել, թմբկահարել, այդ իսկ պատճառով բոլորս պէտք է զգոն լինենք»:

Դիտարկմանը, թէ նախկին ընտրութիւններին բազմիցս արձանագրել են իշխանութեան ձեռամբ կատարած կեղծիքները, Բաղդասարեանն արձագանգեց. «Մենք ներկայի մասին ենք խօսում: Բնականաբար առաջին պարտուողը առաջին դրօշ դա է սարքում՝ ընտրութիւնները կեղծուած են»:

Ժիրայր Սեֆիլեան. «Կայ Մի Ծուղակ, Որը Սերժ Սարգսեանն Ինքն Իր Համար Ստեղծել Է

Կայ մի ծուղակ, որը Սերժ Սարգսեանն ինքն իր համար ստեղծել է: Այդ մասին Նոյեմբերի 1-ին Գիւմրիում «Նոր Հայաստան» նախաձեռնութեան հանրահասարակ մարտիկ, «Ընդդիմութեան միասնական շտաբի» ղեկավար Ժիրայր Սեֆիլեանը:

«Կայ մի ծուղակ, որը Սերժ Սարգսեանն ինքն իր համար ստեղծել է: Աղուէսը երկու թաթով է ընկնելու ծուղակը: Նա տարիներով մոգոնել է, թէ ինչպէս պիտի վերարտադրուի, բայց իր ծրագիրն իր մահկանացուն է կնքելու», - նշել է Սեֆիլեանը:

Նրա խօսքով, այս առիթը առաջին հերթին միաւորելու է ամբողջ ընդդիմութեանը: «Ես համոզուած եմ՝ մինչեւ Դեկտեմբերի 1-ը իսկական ընդդիմադիր ուժերը անպայման համախմբուելու են: Այդ պահանջը ժողովրդի պահանջն է: Մենք չունենք մի տարի եւս սպասելու, մենք իրաւունք չունենք այս առիթը բաց թողելու, այս տարի պէտք է լինի այս յանցաւոր ռեժիմի վերջը», - նշել է Սեֆիլեանը եւ յաւելել. «Հասկանում ենք՝ մեր ժողովրդի կորցրել է հաւատը ոչ միայն ընդդիմադիր գործիչների, այլեւ ամէն ինչի, բայց մենք աշխատելու ենք, վերականգնելու ենք այդ հաւատը»:

«Ոչ»-ի ճակատի Ուժերին Ոչինչ Չի Յաջողուի.- Արտակ Զաքարեան

Աժ պատգամաւոր, ՀՀԿ խմբակցութեան անդամ Արտակ Զաքարեանը համոզուած է, որ սահմանադրական փոփոխութիւնների դէմ պայքարող՝ «Ոչ»-ի ճակատի ուժերին ոչինչ չի յաջողուի:

«Նրանք ուզում են առաջնորդուել այն սկզբունքով, որ հասարակութեան մի մասը դժգոհ է եւ այն, ինչ առաջարկում է կառավարութիւնը, վատ է: Նրանց գործողութիւնները կառուցուած են ոչ ռացիոնալ քայլերի վրայ, ոչինչ չառաջարկող է: «Ոչ» նշանակում է մնալ նոյն տեղում, նպագայում նոյնպէս բոլոր պրոբլեմները բարձր գործող համակարգի վրայ», - Հոկտեմբերի 31-

ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց Արտակ Զաքարեանը: Արտակ Զաքարեանի խօսքով՝ «Ոչ»-ի ճակատը քարոզարշաւի ընթացքում մէկ ամիս շարունակ հասարակութեանը նոյն բանն է ասելու, այնինչ իրենք՝ «Այո»-ի ճակատը, մեծ ծաւալի աշխատանք ունեն անելու, հասարակութեանը իսկապէս ասելիք ունեն:

Նշենք, որ «Ոչ»-ի ճակատին միացել են «Ժառանգութիւն», ՀԺԿ, Հայ Ազգային Գոնկրէս կուսակցութիւնների եւ «Հիմնադիր Խորհրդարանի» ներկայացուցիչները: Սահմանադրական փոփոխութիւնների հանրաբուէն տեղի կունենայ Դեկտեմբերի 6-ին:



ԼՈՒՐԵՐ

Թուրքիայում Երեք Հայ Թեկնածուները Վերընտրուել Են

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 26-րդ գումարման ընտրութիւնների արդիւնքում երեք կուսակցութիւններից ներկայացուած հայ թեկնածուները կրկին պատգամաւոր են դարձել:

Ստամբուլի 2-րդ ընտրատարածքում «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութեան ընտրացուցակում առաջին հորիզոնականը զբաղեցնող հայազգի Սելինա Դողանը պատգամաւոր է վերընտրուել:

Ստամբուլի 2-րդ ընտրատարածքում «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան ընտրացուցակում 14-րդ հորիզոնականում գտնուող Մարգար Եսայեանը նույնպէս ընտրուել է:

Ստամբուլի 3-րդ ընտրատարածքում քրդական «Ժողովուրդների Դեմոկրատական» կուսակցութեան ընտրացուցակում 2-րդ

տեղը զբաղեցնող Կարո (Կարապետ) Փայլանը կրկին պատգամաւոր է դարձել:

Աւելի վաղ NEWS.am-ը յայտնել էր, որ Թուրքիական Milliyet-ի փոխանցմամբ՝ ընդհանուր քուէատուփերի 80 տոկոսը հաշուել են, եւ ստացուել է հետեւեալ պատկերը.

«Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութիւն-49,3 տոկոս,

«Ժողովրդա-հանրապետական» կուսակցութիւն-25,4 տոկոս,

«Ազգայնական Շարժում» կուսակցութիւն-11,9 տոկոս,

«Ժողովուրդների Դեմոկրատական» կուսակցութիւն-10,9 տոկոս:

Նշենք, որ ընդդիմութիւնը առարկութիւններ է յայտնել բացուած քուէատուփերի արդիւնքների հետ կապուած՝ շեշտելով, թէ աւելի քիչ քուէատուփեր են բացուել, քան ներկայացրել ԿԸՀ-ն:

Պարագվայի Սենատորն Առաջարկել Է Հայոց Ցեղասպանութեան Զոհերին Փոխհատուցում Վճարել

Պարագվայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը կրնալ յանձնարարական գործընթացը եւ կօգնի փրկել պատմական յիշողութիւնը: Այդ մասին արժանթիւնական Agencia Prensa Armenia արժանթիւնական պարբերականին յայտնել է Պարագվայի սենատի անդամ Դեզիրէ Մասին, որը Պարագվայի Գոնկրէտում ներկայացրել էր Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ նախագիծը:



Պարագվայի սենատի անդամ Դեզիրէ Մասին

հնարաւորութեամբ», - յաւելել է սենատորը:

Պարագվայի սենատը հոկտեմբերի 29-ին միաձայն որոշում է կայացրել Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ:

«Մենք ճնշման հանդիպեցինք, յատկապէս՝ «ցեղասպանութիւն» բառի հետ կապուած, - ասել է նա: Այնուամենայնիւ, որոշումը միաձայն ընդունուեց:

«Ինչ-որ կերպ պիտի փոխատուցում վճարուի: Մենք հետաքրքրուած ենք դրանում: Ոչ միայն ճանաչմամբ, ինչը շատ կարեւոր է, այլեւ դրան հետեւելիք ինչ-որ տեսակի փոխհատուցման

«Լարուածութիւնը Նուազել Է, Բայց Մենք Միշտ Պաշտպանուցակ Ենք. Ս. Օհանեան

Ատրպէյձանի հետ սահմանին եւ դարաբաղ-ատրպէյձանական հակամարտութեան շփման գծում լարուածութիւնը նուազել է: Այս մասին, Նոյեմբերի 2-ին, խորհրդարանում լրագրողների հետ զրոյցում նշել է Հայաստանի պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանը:

Նրա խօսքով, վերջին երկու շաբաթներին հակառակորդը շատ քիչ է կրակում խոշոր տրամաչափի զէնքերից, մասնաւորապէս ականանետերից. օրական զրանցում է

5-10 ականանետային կրակոց:

«Ներկայ՝ համեմատաբար հանգիստ իրավիճակը կարելի է կապել մեր հարեւանների ներքին խնդիրների հետ, մասնաւորապէս, ընտրութիւնների (Նոյեմբերի 1-ին Ատրպէյձանում խորհրդարանական ընտրութիւններ են տեղի ունեցել-խմբ): Այդուհանդերձ, ինչ-պիսին էլ լինի իրավիճակը, համեմատաբար լարուած թէ խաղաղ, մեր զինուած ուժերը ապահովում են պաշտպանուցակութիւնը», - յաւելել է նախարարը:

Յաղթանակ, Որ Համագոր է Պարտութեան

Շարունակուած էջ 1-էն մագիծը եւ հաւանաբար այժմ պատրաստ է իր դոնորը աւելի ամուր փակելու, իր դաւանած սկզբունքներէն հեռու գտնուող

այդ երկրին առջեւ: Էրտողան թէեւ հասաւ ընտրական յաղթանակի, սակայն այդ յաղթանակը դարձաւ Թուրքիոյ համար իսկական պարտութիւն: «ՄԱՍԻՍ»

Սերժ Սարգսեանը Ներկայ Է Գտնուել Թբիլիսիի Սուրբ Գեորգ Եկեղեցու Վերածման



Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կը կատարուի եկեղեցւոյ օծումը

Նախագահ Սերժ Սարգսեանը եւ տիկին Ռիտա Սարգսեանը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի, եկեղեցու վերականգնման ծրագրի դռնօրները, բազմաթիւ հիւրերի եւ Վիրահայոց թեմի հաւատացեալների մասնակցութեամբ ներկայ են գտնուել Թբիլիսիի հնագոյն եկեղեցիներից մէկի՝ հայկական Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցու վերածման արարողութեանը, որը վա-

րել է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ինչպէս NEWS.am-ը տեղեկացնում է նախագահի պաշտօնական կայքից, արարողութեանը ներկայ է եղել նաեւ Վրաստանի նախկին վարչապետ Բիճինա Իվանիշվիլին, ով միւս բարերարների հետ վեհափառ Հայրապետի կողմից պարգեւատրուել է կողմից Հայ Առաքելական Եկեղեցու բարձր պարգեւներով: Արարողութիւնից յետոյ տեղի է ունեցել եկեղեցու վերակառուցման ծրագրի բարերարների անուններով յուշատախտակի բացումը:

ԼՂ-ն Կրկին Վստահեցնում Է՝ Ստեփանակերտի Օդանաւակայանը մօտ Ապագայում Շահագործման



Պաշտօնական Ստեփանակերտը շարունակում է վստահեցնել, թէ Ստեփանակերտի նորոգուած օդանաւակայանը մօտ ապագայում շահագործման կը յանձնուի, թէեւ արդէն 6 տարի է՝ այն այդպէս էլ իր նպատակին չի ծառայում:

Լեռնային Ղարաբաղի վարչապետի խօսնակ Արտակ Բեգլարեանն «Ազատութեան» հետ զրոյցում նշեց, թէ օդանաւակայանը տեխնիկական որեւէ խնդիր չունի:

«Արցախի Հանրապետութեան վարչապետը մի քանի անգամ տարբեր առիթներով՝ ասուլիսների, հարցազրոյցների ժամանակ արտայայտուել է, նշել է, որ օդանաւակայանի վերջնական շահագործման ուղղութեամբ ջանքեր կատարուած են, աշխատանքներ կան, տեխնիկական խնդիրներ, բնականաբար, չկան, արդէն վաղուց պատրաստ է: Սակայն կան որոշ դժուարութիւններ, քաղաքական խոչընդոտներ, որոնք պէտք է կարգաւորուեն: Յոյս ունենք, որ ոչ հեռու ապագայում արդէն կարողանալու

ենք օգտուել օդանաւակայանի ծառայութիւններից: Ենթադրաբար քաղաքական պայմանաւորուած է հիմնականում Ատրպէյձանի գործողութիւններով», - ասաց Բեգլարեանը:

Լեռնային Ղարաբաղի քաղաքապետի վարչութեան նախկին պետ Դմիտրի Աթբաշեանը եւս պնդեց, որ օդանաւակայանի գործարկումը ձգձգուած է քաղաքական պատճառով: Նրա խօսքով՝ առանց քաղաքական պայմանաւորուածութեան հնարաւոր չէ Ստեփանակերտի օդանաւակայանից թռիչքներ իրականացնել: Աւելի վաղ՝ Ատրպէյձանը զգուշացրել էր՝ Ստեփանակերտի օդանաւակայանից թռիչքների դէպքում «հարուածներ կը հասցնի իր օդային տարածքը խախտելու համար»:

«Ես օպտիմիստ եմ, գիտեմ, որ թռիչքներ անպայման կը լինեն, բայց վաղ, թէ ուշ, չեմ կարող ասել, դա արդէն քաղաքական հարց է: Քաղաքական գործիչները ինձանից լաւ կ'ասեն: Մենք լրիւ պատրաստ ենք», - ասաց Աթբաշեանը:



**«Ես Կոչ Եմ Ուղղել Թուրքիայի Իշխանութիւններին՝ Հայկական Սփիւռքը Չճերկայացնել Իբրեւ Թշնամի»**  
**Հարցազրոյց Թուրքիոյ Խորհրդարանի Անդամ Սելիմա Դողանի Հետ**

Յունիսի 7-ին Թուրքիայի Խորհրդարանական ընտրութիւններուն առաջին անգամ պատգամաւոր ընտրուած հայկական ծագումով Սելիմա Դողանը (Սելիմա Օզուզուն Դողան) Նոյեմբերի 1-ի արտահերթ ընտրութիւններուն վերընտրուած է:

«Արեւելք» կայքէջը հարցազրոյց ունեցած է Թուրքիոյ Ժողովրդահանրապետական կուսակցութեան անդամ, իրաւաբան Սելիմա Դողանի հետ:

Գնահատելով Թուրքիայի վերջին ամիսների իրավիճակը՝ կին պատգամաւորը նշեց, որ Յունիսի 7-ից ի վեր երկիրն անցնում է ճգնաժամային հանգրուաններով: «Թուրքիայի նախագահը մերժեց ընդունել եւ յարգել ընտրողների կամքը: Նա ամէն ջանք գործադրեց՝ Խորհրդարանական վերընտրութիւններ կազմակերպելու համար, քանի որ սպառել էր համաձայնական կառավարութիւն կազմելու յոյսերը եւ բուն միջոցներ կիրառեց՝ միանձնեայ իշխանութեան վերադառնալու համար»:

Յիշեցնելով, որ Թուրքիայում գինուտրական գործողութիւնների հետեւանքով 900 մարդ է զոհուել, մեր գրուցակիցն ասաց. «Տեսնուած թիւերը ծանր վիճակում յայտնուեց: Վիճակն այնքան ծանր էր, որ շատ յաճախ ժողովուրդը էջր կարողանում սզալ իր գոհերի մահը: Երկրում խօսքի ազատութիւնը բռնաբարուեց, մամուլի անաչառութիւնը գիշեր իր դիրքերը, իսկ դատարիւրակական համակարգի հանդէպ ժողովրդի վստահութիւնը նուազեց եւ իջաւ 20%-ի: «Արդարութիւն ու զարգացում» (AKP) կուսակցութիւնը ոչ միայն ամէն ճիգ գործադրեց վերստանալու համար իր կորցրած քուէները, այլ նաեւ մի վտանգաւոր խաղ յօրինեց՝ այն PKK-ն, PYD-ն եւ «Իսլամական պետութիւնը» դրեց մի «կախարդական սնդուկում»՝ շահագործելով կրօնական եւ ազգայնական ծայրայեղ մտայնութիւններ: AKP-ի հետեւորդների մեծագոյն մասը սկսեց հաւատալ, թէ Անկարայի ոճրագործութեան հեղինակը նոյն ինքը՝ PKK-ն է: Իշխող կուսակցութիւնն ինչ-որ տեղ պատանդ վերցրեց հասարակական կարծիքն ու բարոյական արժէքները: Հանրութեան ամէն միջոցներով համոզում էին, որ եթէ AKP-ն իշխանութեան վրայ չլինի, երկիրը տնտեսական քաոսի կը գնայ: Տեղի էին ունենում յարձակումներ այն մամուլ կենտրոնների վրայ, որոնք քննադատում էին էրզողանին, երկրի բոլոր շրջաններում տարածուել էր ատեղութեան խօսելաոճը: Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով՝ կարելի է դիտարկել ընտրութեան արդիւնքը եւ ասել, որ իշխող կուսակցութիւնը «յաղթանակ» տարաւ»:

Սելիմա Դողանը նաեւ նշեց, որ նոյնիսկ ինքը՝ իշխող կուսակցութիւնը էջր ակնկալում, որ ընտրութիւններում նման յաղթանակ պիտի տօնի:

«Բայց պէտք է նշեմ, որ չնայած էրզողանն ու իր թիմակիցները կառավարութիւն կազմելու հնարաւորութիւն ստացան, բայց նրանք բարեբախտաբար



օրէնսդրական բաւարար ուժ չունեն՝ փոխելու երկրի սահմանադրութիւնը», - նշեց մեր գրուցակիցը:

Պատասխանելով քրդական հարցի մասին մեր հարցին, թէ ո՞ւր կարող են հասնել Թուրքքրդական բախումները, Սելիմա Դողանն ասաց.

«Քրդական հարցը մտահոգիչ է: Եթէ իշխանութիւնները դրական եւ օրինական միջոցառումներ չկարողանան ստեղծել երկրում, ապա այս բոլորն իրար է: Ամէն ինչ կախում ունի իշխող կուսակցութեան մտայնութիւնից: Այսինքն, եթէ իշխանութիւնը լուծումներ առաջարկի եւ անկեղծ լինի իր մտայնութիւններում, այդ բախումները կարող են վերջ գտնել»:

Իսկ ի՞նչ ծրագրեր ունի Սելիմա Դողանը, իբրեւ հայազգի պատգամաւոր. «Շարունակելու եմ պայքարել մարդկային իրաւունքների եւ յատկապէս՝ փոքրամասնութիւնների իրաւունքների ոտնահարումների դէմ: Ես չեմ ուզում իմ գործունէութեամբ ներկայանալ միայն որպէս հայ: Իմ պարտականութիւնն է վարուել նաեւ որպէս թուրք քաղաքացի: Ինչ վերաբերւում է հայ-թուրքական յարաբերութիւններին, ես իմ պարտականութիւնն եմ համարում սատար կանգնել բոլոր այն ջանքերին, որոնք միտուած են կամուրջներ ստեղծել Թուրքիայի, Հայաստանի եւ Եւրոպայի միջեւ: Իմ ընտրութեան առաջին օրուանից ես կոչ եմ ուղղել Թուրքիայի իշխանութիւններին՝ հայկական սփիւռքը չներկայացնել իբրեւ թշնամի: Որովհետեւ, ինչպէս Թուրքիայի վարչապետ Դաւութօղլուն է մի առիթով յայտարարել՝ սփիւռքի հայերը մեր թշնամիները չեն, այլ նրանք Անատոլիայի քաղաքացիներ են: Մենք պէտք է ճանապարհներ գտնենք՝ նրանց սիրաշահելու համար: Ես, որպէս Ժողովրդահանրապետական կուսակցութեան անդամ, իմ ծրագրերում առաջնահերթութիւն եմ նկատել վերադարձնել այն բոլոր հայերի քաղաքացիութիւնը, որոնք այս հողի ծնունդն են, եւ այս առումով պատրաստ եմ համագործակցել բոլորի հետ: Ասեմ նաեւ, որ իմ ներկայութիւնն այս կուսակցութեան մէջ, շատ դրական միջոցառում ստեղծեց: Այնքան ժամանակ, որ մենք միմեանց հետ չլիւրձեւ եւ համագործակցում ենք յարգանքի, խօսքի ազատութեան միջոցառում, շատ մեծ փոփոխութիւններ են ակնկալուում Թուրքիայում»:

**ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ**

**ՄԴՅՎ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՄ Ա.-Ի ՀԵՏ**



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը Զորքը բաղկացրել է 28 Հոկտեմբերի կէսօրին այցելեց Անթիլիաս ու տեսակցեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հետ:

Պատուիրակութեան մաս կազմեցին Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան, փոխ ատենապետ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան եւ վարչութեան անդամ Ընկ. Տոքթ. Եղիկ Ճէրէճեան:

Մօտ ժամ մը տեւած տեսակցութեան ընթացքին քննարկուեցան

հայ ազգային կեանքը յուզող հարցերը, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները եւ զանոնք զարգացնելու միջոցները:

Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը վեհափառ հայրապետին հետ կեդրոնացաւ սուրբահայերուն խնդիրներուն եւ զանոնք լուծելու գաղափարներուն վրայ: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին առթիւ Հայաստանի, Լիբանանի եւ Սփիւռքի այլ գաղթօճախներու մէջ կայացած ձեռնարկներուն ու նախաձեռնութիւններուն, նաեւ անոնց արդիւնքներուն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԱԾ**

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան յայտարարեց, որ Երեւան կը ցանկայ ԵԱՀԿի Մինսքի խմբակի համա-նախագահներէն տեւանել հասցէական գնահատականներ: «Մինսքի խմբակի տարիներու աշխատանքը ուղ ղուած է գինադարի դրութեան պահպանումին: Այսուհանդերձ, ժամանակը եւ իրավիճակները կը փոխուին: Ցանկալի պիտի ըլլար, որ գնահատականները եւ յայտարարութիւնները հասցէական ըլլային», ըսաւ նախարարը:

Անոր համաձայն, Հայաստանի սահմանադրական փոփոխութիւններու նախագիծը կը պահպանէ գինուած ուժերուն շահերը եւ մարտունակութիւնը: Խօսելով սահմանային դրութեան մասին, նախարար Օհանեան նշեց, որ կացութիւնը համեմատաբար հանդարտ է:

«Հանգիստ վիճակը կարելի է



կապել մեր հարեւաններու ներքին խնդիրներուն՝ մանաւանդ ընտրութիւններուն: Այսուհանդերձ, ինչ որ ալ ըլլայ կացութիւնը, լարուած թէ խաղաղ, մեր գինուած ուժերը կ'ապահովեն սահմանային պաշտպանութիւնը», հաստատեց պաշտպանութեան նախարարը:

**Ապտուլլահ Կիւլան Ապօրէն Կերպով Ֆինանսաւորած է**

Շարունակուած է 1-էն

քին կանոնները եւ կամ հաւանաբար նոյնիսկ, Միացեալ Նահանգներու Դաշնակցային օրէնքները:

«USA Today»-ի կողմէ կատարուած լրագրական հետազօտութիւնները յայտնաբերած են որ, այցելութիւններուն մասնակցողներէն շատեր իրենց յայտարարագրերուն մէջ ըսած են որ անձնապէս պիտի հոգան այցելութեան ծախսերը: Թերթը կըրցած է փաստել որ, այդ փաստաթուղթերէն շատերը կեղծ են:

Միայն այս տարուայ Յուլիսին, Կիւլանի հովանաւորած խմբակները 800 հազար տոլար ծախսած են այցելութիւններուն

վրայ: Ապտուլլահ Կիւլան երկար տարիներէ ի վեր Թուրքիոյ մէջ հաստատած է իսլամամէտ դպրոցներ եւ բարեսիրական կազմակերպութիւններ, որոնց շնորհիւ ներթափանցած է երկրի տարբեր կառույցներէն ներս, ինչպիսին են բանակը, դատախազութիւնը, մամուլը եւ այլն:

Սկզբնական շրջանին Կուլան աջակցած էր Ռէճեփ Էրտողանի կառավարութեան, սակայն հետագային ամբաստանուեցաւ յեղաշրջման փորձ կազմակերպելու մէջ եւ թրքական իշխանութիւնները կը պահանջեն Միացեալ Նահանգներէն՝ Ապտուլլահ Կիւլանի յանձնումը Թուրքիային:



# ՈՒԵՍԹՄԻՍԹՈՐ ԱՐԲԱՅԱՐԱՆԻ ՄԷՋ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՔՈՒՄԵՆԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՆԱԶԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ



28 Հոկտեմբերի երեկոյան, աշխարհի ամենէն յայտնի քրիստոնէական եկեղեցիներէն մէկուն՝ Ուեսթմինսթըր Աբբայարանին մէջ տեղի ունեցաւ պատմական աննախընթաց եկեղեցական արարողութիւն մը, նուիրուած Հայոց Յեղասպանութեան սուրբ նահատակներու յիշատակին, մասնակցութեամբ Հայաստանեայց Առաքելական եւ Անգլիկան եկեղեցիներու, նախագահութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Մայրապետի Պատրիարքի:

Այս իրադարձութիւնն արդարեւ բացառիկ էր իր բնոյթով, քանի որ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած պատմական կարեւորութիւններ կայացնող նման եզակի ձեռնարկ մը մինչեւ այսօր չէր կազմակերպուած Միացեալ Թագաւորութեան մէջ:

Այսօր Ուեսթմինսթըր Աբբայարանն իր փառահեղ կամարներուն տակ կը հիւրընկալէր աւելի քան 2000 հոգի: Ներկայ էին գահաժառանգ Արքայազն Իշխան Չարլզը, որ կը ներկայացնէր արքայական ընտանիքը, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանը, Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական պատուիրակութիւնը, Ուեսթմինսթըրի Լորտ քաղաքապետը, Մ. Թագաւորութեան կառավարութեան եւ խորհրդարանի անդամներ, տարբեր երկիրներու դեսպաններ եւ դիւանագէտներ, Մեծն Բրիտանիոյ Անգլիկան, Կաթողիկ եւ Ուղղափառ քոյր եկեղեցիներու առաջնորդներ, բրիտանահայեր, ինչպէս նաեւ աշխարհի բազմաթիւ երկիրներէն եկած

հայկական համայնքներու ներկայացուցիչներ:

Ուեսթմինսթըր Աբբայարանը Միացեալ Թագաւորութեան կարեւորագոյն եկեղեցին է, ուր տեղի կ'ունենան միջազգային եւ ազգային կարեւորութիւններ կայացնող իրադարձութիւններուն նուիրուած միջոցառումները, Թագաւորութիւնները, Թագաւորական ընտանիքի պսակադրութիւնները, համբաւաւոր պետական եւ քաղաքական գործիչներու թաղման եւ հոգեհանգստեան արարողութիւնները, դարակազմիկ պատմական դէպքերու յիշատակի հանդիսութիւնները:

Հայոց Յեղասպանութեան հարիւրամեայ տարելիցն ու մեր սուրբ նահատակներու յիշատակն արժանավայել ոգեկոչելու համար Ուեսթմինսթըր Աբբայարանէն աւելի պատշաճ վայր կարելի չէր գտնել Միացեալ Թագաւորութեան մէջ:

Այս միջոցառումը կազմակերպուած եւ հովանաւորուած էր Միացեալ Թագաւորութեան ՀՀ Դեսպան, Հայաստանի նախկին վարչապետ՝ Արմէն Սարգսեանի կողմէ: Ըլլալով Հայոց Յեղասպանութիւնը վերապրած հայորդիներու ժառանգորդ՝ Ա. Սարգսեանին համար այս արարողութիւնը բացի իր գուտ կրօնական եւ քաղաքական նշանակութենէն՝ էր նաեւ հոգիի պարտք, որուն անդրադաձած է ան այս առիթով պատրաստուած գրքովին մէջ:

Արարողութեան ընթացքին Անգլիկան եւ Հայ Առաքելական եկեղեցիներու հոգեւորականները յաջորդաբար կ'աղօթէին եւ Աւե-

տարանէն ընթերցումներ կը կատարէին, իսկ շարականները կ'երգէր՝ Լոնտոնի Ս. Եղիշէ եկեղեցոյ երգչախումբը:

Ուեսթմինսթըր Աբբայարանի Աւագերէց ձոն Հոլն իր քարոզին մէջ՝ Կայէնի կողմէ իր եղբօր Աբէլի սպանութեան պատմութեան միջոցով յիշատակեց Հայոց Յեղասպանութեան անհամար զոհերը, որոնց անմեղ արիւնը թափեցաւ ատելութեամբ լեցուն մոլեռանդ յանցագործներու ձեռքով: Ոգեկոչելով նոր սրբադասուած հայ նահատակները՝ Անգլիկան հոգեւորականը անոնց աղօթքն ու օրհնութիւնը հայցեց մեր հոգիներու փրկութեան համար:

Օրուան խորհուրդին շուրջ քարոզեց Քենթրպերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչը, Լոնտոնի Եպիսկոպոս եւ արքայական ընտանիքի հոգեւոր հովիւ, Նորին Սրբազնութիւն Լորտ Ռիչարտ

պատուելիներ Քրիստոֆը Շտոլցը, Վըրնոն Ուայթն ու Պարոնուհի Քարոլայն Քոքսը:

Արարողութիւնը աւարտեցաւ Ամենայն Հայոց Հայրապետի պատգամով, աղօթքով, օրհնութեամբ, Հայրապետական եւ Հայաստանի Հանրապետութեան ու Միացեալ Թագաւորութեան օրհներգներով:

Էջումենիկ այս արարողութիւնը, յիշաւի, դարձաւ Հայոց Յեղասպանութեան 100 ամեակին նուիրուած եւ ի սփիւռս աշխարհի իրականացուած միջոցառումներու արժանավայել եզրափակումը: Կարելի է հաստատել նաեւ՝ որ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը Մեծն Բրիտանիոյ մէջ Հոկտեմբեր 28էն յետոյ կը թեւակոխէ նոր շրջան մը:

Այս առիթով, կարելի չէ գնահատանքի ջերմ խօսքեր չհասցնէ ազգել Միացեալ Թագաւորութեան ՀՀ Դեսպանութեան աշխա-



Չարթերսը, որմէ յետոյ երգչախումբը կատարեց նահատակներուն ձօնուած շարականը: Այնուհետեւ աղօթքներ կարդացին Հայոց Յեղասպանութիւնը վերապրածներու զաւակներ՝ Ասատուր Կիւզելեանը, Շաքէ Մեճըր-Չիլիկիրեանը, Էլէն Ադամեանը, ՀՀ Դեսպան Արմէն Սարգսեանը, ինչպէս նաեւ՝

տակազմին, յատկապէս դեսպան Արմէն Սարգսեանին՝ որուն անխոնջ ջանքերը, կազմակերպչական բացառիկ ունակութիւնը, միջազգային քաղաքական, տնտեսական եւ ընկերային շրջանակներու մէջ վայելած յարգանքն անտարակոյս մեծ դեր ունեցան նման աննախընթաց ձեռնարկի միջոցաւ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

**Bedros S. Maronian 818/500-9585**      **Siamanto B. Maronian 818/269-0909**

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
*More locations and more ways to service your insurance and financial needs*

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

**NEW YORK LIFE**   **Anthem**   **BlueShield**   **Aetna**   **HealthNec**   **CIGNA**   **KAISER PERMANENTE**

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
**Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է**

Coverage & Protection should be on the top of your priority list.



# ՔՍԱՆ ՀԱԶԱՐՆԵՐԻ ԿԵՐԱՓՈՒՆՈՒՈՂ ՔՍԱՆԻ ԱՌԵՂՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃԵԱՆ

Վերջին տարիներին, նկատի ունենալով նաև Եղեռնի մեկզարեայ տարելիցը, Հայրենիքում թէ Սփիւռքում, բնականաբար, գրողներն աւելի յաճախակի են անդրադառնում մեր պատմութեան ինչպէս ողբերգական ու ցաւոտ էջերին, այնպէս էլ հերոսական դրուագներին, ազատամարտիկների, վրիժառուների մասին գեղարուեստական պատմություններին: Շատ անգամ շեշտում է նաև այդ երկերը այլ լեզուներով թարգմանելու անհրաժեշտութիւնը, քանի որ մեր պատմութիւնը, կարծում ենք, մենք մեզ չենք ներկայացնելու, այլ՝ օտարներին, առաջին հերթին աշխարհի հզօր տէրութիւններին ու ժողովուրդներին: Քանի որ, ի վերջոյ, մեր բուն ինդիւրը միայն պատմութիւնը ներկայացնելը չէ, այլ՝ պատմական արդարութեան վերականգնումը, Յեղափոխութիւն կոչուող Չարիքի նորանոր դրսևորումների կանխարգելումը, նաև մեր պահանջատիրութիւնը, պատմական հայրենիքը վերադարձնելու ուղիների որոնումն ու դրա իրական հնարաւորութիւնների ստեղծումը:

Դա, իհարկէ, ճիշտ մօտեցում է: Բայց արի ու տես, որ մեր պատմութիւնը, նրանում գործած ուժերին ու հերոսներին հենց մեզ՝ հայերիս, ըստ ամենայնի ներկայացնելու պէտքը կա՛յ: Դրանում համոզուելու համար բաց Գրիգոր Զանիկեանի վերջերս հրատարակուած «Բասանի ու քսան հազարները» գրքի 254-րդ էջը ու կարդայք է ԱՍԱԱ-ի ազատամարտիկ Գէորգ Գիւզելեանի օրագրութեան հետեւեալ հատուածը՝ (Արցախեան շարժման օրերին Երեւանի Ազատութեան հրապարակում) «Մի խումբ երկրպագներ նոյնիսկ առաջարկեցին, որ իրենց մարտախումբը ես գլխավորեմ, հրամանատարը լինեմ:

- Մի պայմանով,- ասացի,- որ շոկատը «Մեծն Մուրատ» կոչուի:

- Մեծն Մուրատն ո՞վ է,- զարմացան:

- Հնչակեան կուսակցութեան նշանաւոր լեզափոխականն է ու ապստամբապետը:

Աւելի զարմացան.

- Ի՞նչ Հնչակեան կուսակցութիւն»:

Միանգամից ասեմք, որ գիրքը հայ ազատամարտի նշանաւոր դէմքերից մէկի՝ Փարամազի (Մաթեոս Մարգարեան) եւ 1915-ի Յունիսի 15-ին Պոլսի Բայազետի հրապարակում կախաղան հանուած հնչակեան քսան ազատամարտիկների մասին է: Վերնագրի համար հիմք է ծառայել Քսանի անդամներից բժիշկ Պեննէի (Պետրոս Թորոսեան)՝ թուրք դահիճներին նետուած խորհրդանշական արտայայտութիւնը՝ «Դուք մեզ՝ քսաններս, կը կախէք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի»: Իրականում, սակայն, ընդգրկման սահմանները շատ աւելի լայն են: Գրքի աւելի քան մէկ տասնեակ գլուխներում գրողն ընթերցողին տանում է ժնեւու Փարիզ, Պոլիս ու Թիֆլիս, Մասուն ու Կիլիկիա, Մուսա լեռ ու Արցախ՝ ներկայացնելով աւելի քան մէկ դարի հայ ազգային-ազատագրական պայքարի իւրատեսակ տարեգրութիւնը:

Ստեղծագործական շրջադարձը դէպի ազգային ճակատագրի,

Յաւի եւ Յոյսի, Պայքարի ու Մաքառման թեմատիկան Գրիգոր Զանիկեանի ներաշխարհում սկսուել է դեռ տասնամեակներ առաջ՝ «Ուղեւորութիւն դէպի մանկութիւն» վիպակից, երբ նրա հայեացքը շրջուեց դէպի իր ներսը, հոգեկան խորքերը՝ սրելով ինքնաճանաչման կենսական պահանջը. ո՞վ եմ ես իրականում, որտեղի՞ց եմ գալիս եւ ո՞ւր եմ գնում:

Անձնական-տոհմային պատմութիւնը աստիճանաբար ընդարձակեց իր սահմանները՝ գրողի ջանքերը սեւեռելով Մեծ եղեռնի սարսափների եւ ազգային ինքնապաշտպանութեան, ընդհուպ մինչեւ Արցախեան ազատամարտի հերոսական դրուագների բացայայտմանն ու նկարագրութեանը, ազգային վրիժառուների ու նուիրեալ «արդարամարտիկների», քաջագունների իրական կերպարների ստեղծմանը («Մահապարտները», «Եւաբուր», «Յաղթագէտները», «Ապրիլ 11 (24)» եւ այլն):

Ինչ վերաբերում է ներկայ գրքին, ապա կարող եմ վկայել, որ այն Գրիգոր Զանիկեանը մտայդացել է դեռ քառորդ դար առաջ՝ 90-ականների սկզբին, երբ նրա առաջարկով Մեղրիում այցելեցինք Փարամազի հայրական օճախ: Այն ժամանակ արդէն, ազատամարտիկի հարազատների հետ անկեղծ զրոյցների ու հարցովորձերի միջոցով, վստահ եմ, նրա մէջ խմորում էր ապագայ վիպապատմի ուրուագիծը: Գրքի ստեղծման նպատակադրումը, բովանդակութիւնը եւ գեղարուեստավաւերագրական ժանրը թեւորում են իրենց պայմանները: Ըստ այդմ՝ ընթերցողը նախ եւ առաջ ուշադրութիւն է դարձնում, թէ ինչ ինդիւրներ եւ հիմնահարցեր են շեշտադրում պատմի մէջ (թէ՛ հերոսների եւ թէ՛ հեղինակի կողմից): Դրանցից առաջինը, իհարկէ, ազգային-ազատագրութեան ուղիների ինդիւրն է: Յատկանշական է այս իմաստով, որ 1887 թ. ժնեւու լեզափոխական երիտասարդների նպատակադրումը շատ լուրջ ու հայրենապաշտական էր, բայց եւ չափազանց ռոմանտիկ՝ «Արեւմտահայաստանի ազատագրութիւնն այդ զիշեր այնքան մօտ էր թուում»: Բայց ահա առաջին իսկ քայլերը դէմ են առնում իրականութեան պատնէշին. Մարտի «Արմենիա» լրագրի խմբագրի Մկրտիչ Փորթոյանի խմբագրութեանը ոչ միայն չի խրախուսում, այլև յորդորում է հետ կանգնել իսլամի դժբաղդերից: Ու ծագում է հարցը՝ որտեղի՞ց կարելի է կազմակերպել ու ղեկավարել ազատագրական շարժումը:

Ռուբէն Կարապետեանը (Խանազատ) չի հաւատում ժընեւից Հայաստանում լեզափոխութիւն անելու գաղափարին եւ, ի վերջոյ, դուրս է գալիս շարքերից, մեկնում Պոլիս եւ այնտեղ վերջնականապէս համոզուած, որ դա հնարաւոր չէ. «ժընեւում ծրագրել էին փրկել Արեւմտահայաստանն ու արեւմտահայութեանը, բայց ո՛չ մէկի, ո՛չ էլ միւսի մասին գաղափար չէին ունեցել: Որտեղի՞ց ունենային, չէին եղել, չէին տեսել»: Ի դէպ, Քրիստափոր Միքայէլեանն ու Սիրոն Զաւարեանն էլ Թիֆլիսից էին ուղում լեզափոխութիւն անել, բայց իրենց կուսակցութիւնն ստեղծելով՝ Պարզում է նաև, որ յաջողութեան համար պէտք է



դիմել ոչ թէ մեծատուններին, մտաւորականներին կամ հոգեւոր գործիչներին, այլ հենց տառապեալ, գաղթական, կեղեքուող ժողովրդին:

Գրքում կայ մի դրուագ, որտեղ Մասունի վրայ թուրքական արշաւի նախաշէմին Մուրատը գալիս է Թիֆլիս՝ Ղազարոս Աղայեանի, Ատրպետի հետ հարուստներից գէնքի գումար հայթայթելու, սակայն՝ «Ոչ մի քսակ չի բացում»: Բայց հեղինակի համար դա այնքան էլ միանշանակ չէ, քանզի բերում է նաև հակառակ օրինակը, երբ Օդեսայի մեծահարուստ այրի Անուշ Հերեանը մեծ գումարներ է տալիս Մուսա լեռան հերոսամարտիկներին զինելու համար: Այնուամենայնիւ, գլխաւոր հարցերից մէկը, ինչպէս այս, այնպէս էլ թեմատիկային նուիրուած շատ այլ երկերում, մնում է հայոց պարտութիւնների պատճառի ինդիւրը (Մուշեղ Գալոյեանը կ'ասէր՝ պատճառը, պատճառների պատճառը):

Գրքում մատնանշուողները մի քանիսն են՝ անհատականից մինչեւ զբաղեցրած աշխարհաքաղաքական: Այսպէս՝ Մուրատի համոզմամբ, բոլոր ճակատամարտերը «տանուլ ենք տուել մատնիչների պատճառով: Հա՛յ մատնիչների»: Եւ ապա՝ աւելի ընդհանրացուած բանաձեւում. «Յաւօք, դաւաճանութիւնը անձ է՛ր, ազգային արատ է՛ր»: Ու թէեւ գրքում կան այդպիսի մի քանի «հերոսներ», այդ թւում՝ հանրայայտ Արշաւիր Սահակեանը (նոյն Արթուր Եասեանը), կարծում ենք, այս հարցում պէտք է շատ զգուշ լինել: Ի վերջոյ, դաւաճաններ կան բոլոր ազգերի մէջ (ցորենն առանց որոմի չի լինում, եւ մենք էլ բացառութիւն չենք), բայց համոզուած ենք, որ հիմքեր չկան նման առանձին դէպքերը որակելու որպէս ազգային արատի դրսևորումներ:

Գրքի մէկ այլ դրուագում՝ պատանի հայ մատնիչի միջոցով, թուրքերը ձերբակալում են նշանաւոր գործիչ Միհրան Տամատեանին, բայց այստեղ կարելու է մեկնաբանութիւնը՝ «Տասը տարեկան այդ տղան դաւաճանութեան մասին գաղափար չունէր, խոշոր գլխազինն ի՞նչ է՛ չգիտէր, ուղղակի տատից լսել էր, որ սասունցիները բնակակիցների՝ թուրքերի ու քրտերի հետ միշտ հաշտ, համերաշխ են ապրել, դրսից եկած լեզափոխականներն են իրենց թշնամացրել, կոխ գցել»: Այս տեսակետը մեր գրականութեան մէջ ունեցել է իր յայտնի կիրառութիւնները (չէ՛նք, թէ՛կուզ, Գ. Մահարու «Այրուող այգեատաններ»-ում քոմիթաճիւնների շուրջ եղած կարծիքները): Պատճառների թւում նշուած է նաև հայութեան գործողութիւնների անհամաձայնեցուածութիւնը: Նոյն Գիւզելեանի օրագրութեան

մէջ այսպիսի տողեր կան. Արցախում, Մարտակերտում «ազատամարտիկներն անձուրաց, անձնագորս պաշտպանում էին, բայց պաշտպանուած էին առանձին ջոկատներով, չէին համագործակցում: Ինչպէս հայրուկային մարտախմբերը Արեւմտահայաստանում: Դա չեղա՞ պատճառը, որ Յեղափոխութեան տարիներին թուրքական բանակը կարողացաւ գատ-գատ ջախջախել վանի, Մուսա լեռան, Շապին Գարահիսարի, Մասունի, Ուրֆա-Եղեւսիայի ըմբոստ ընդգումները»: Վերջապէս, թերեւս ամէնից գլխաւորն ու գորաւորը՝ «Աշխարհի գերտէրութիւններն իրենց նենգ, ծաւալապաշտական նկրտումներն ունէին, ձգտեցին հերթական ջարդի առիթը շահարկել»: Մասնաւորապէս, Ֆրանսան, օգտագործելով Կիլիկիայում Հայկական լեզոնի ուժերը, ի վերջոյ, դաւաճանեց հայերին, Կիլիկիան զիջեց թուրքիային, իսկ Միհրան Տամատեանի գլխաւորած «Կիլիկիայի Հայկական Հանրապետութիւնը հազիւ մի օրու կեանք ունեցաւ»: Ասպատապետ Գրիգոր Նալբանդեանի (Ս. Վահագնի) յուսահատ բղաւոցին՝ «Հէ՛յ, Ֆրանսիա, էդ ո՞ւմ հողն ես ում տալիս: Ֆրանսան չպատասխանեց: Աշխարհն էլ» (ընդգծումները մերն են - Պ.Դ.):

Թուրքուած պատճառներից իւրաքանչիւրը, անշուշտ, կատարել է իր դերը, սակայն այսօր մեր նպատակը պատմական իրողութիւնների հետաքննութիւնը չէ, համոզուած ենք, որ այդ ամէնի քաջիմացութիւնը մեզ պէտք է մեր ժողովրդի լեռնապաշտպանութեան հասնելու ռազմավարութիւնը ճշտելու համար: Մինչ այժմ պատմական տարբեր հանգամանքների պարտադրանքով, Արդարութեան վերահաստատման հայոց ջանքերն ուղղուել են առանձին անհատների, խմբերի կամ կառույցների՝ ազգային նուիրեալների, կողմից որոշակի գործողութիւնների իրականացմանը՝ դաւաճանների պատժում, թուրք եղեռնագործների նկատմամբ պատմականօրէն արդարացուած մահապատժի իրագործում, բռնարարքների միջոցով հայ ժողովրդի մեծագոյն ողբերգութեան միջազգայնօրէն դատապարտման անհրաժեշտութեան հետապնդում եւ այլն:

1984-ին Ֆրանսայում թուրքիայի հիւպատոսարանի գրաւման եւ 50 հոգու պատանդ վերցնելու գործով դատաւարութեան ժամանակ դատարանի նախագահի հարցին՝ «Կարծում էք, որ բռնարարքներից բացի այլ լուծում չկա՞յ», Գէորգ Գիւզելեանը պատասխանում է. «Եթէ գոնէ մէկ այլ արդիւնաւէտ միջոց լինէր, գէնք չէինք



### ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ԳԱՆՁԵՐՈՒՆ ԻՐԱԻՍՏԵՐԸ



#### ՈՍԿԱՆ ՄԻՄԻԹԱՐԵԱՆ

Թէեւ հայկական առածը կ'ըսէ որ «երկաթը տաք տաք կը ծեծեն», բայց այս պարագային կարելի էր որդեգրել նման մօտեցում մը, երբ հարցը կը վերաբերի իրաւաբանականօրինականութեան դաշտին, որ լուրջ ու մանրագնին փնտրտուքի, հետազոտութեան եւ վերլուծումի կը կարօտի:

Ականատես Զաւէն Պատրիարք Տ. Եղիաբեան եւ ժամանակակից պատմագրող Թէոդիկ հաստատած են թէ առնուազն 4,000 հայ հոգեւորականներ, միայն Հայ Առաքելական Եկեղեցիէն, զոհ գացին ցեղասպանութեան: Հարիւրաւոր հայ կաթողիկէ եւ բողոքական եկեղեցականներ եւս դասուեցան նահատակ հոգեւորականներու շարքին: Առաջին հաւաստի չարաղէտ լուրը կը լսուի Պատրիարքին որ 1915 Յուլիս 13 թուակիր նամակով Պուլկարիոյ առաջնորդ Ղեւոնդ եպս. Դուրեանին կը հաղորդէր թէ հայ եկեղեցիներն ու վանքերը կողոպտուած էին, եւ թէ Պրուսայի Արմաշական Պարզեւ Վրդ. Դանիէլեան, Տրապիզոնի Գէորգ Վրդ. Թուրեան, Կեսարիոյ առաջնորդ խորով եպս. Պէհրիկեան, Շապին Գարահիսարի Վաղինակ Վրդ. Թորիկեան, Չարսանձաքի Գէորգ Վրդ. Նալպանտեան առաջնորդները, բոլորն ալ Արմաշի Դպրեւանքի ընտիր սերունդներէն, բանտարկուած էին եւ պատերազմական ատենաներու յանձնուած:

Նոյն նամակէն կը հաստատուի որ Տիգրանակերտի տեղապահ

Մկրտիչ Վրդ. Զլղատեան բանտի մէջ ծեծի տակ եւ ապա կրակներու բոցերուն մէջ նահատակուած է: Զաւէն Պատրիարքի Օգոստոս 15 թ. նամակէն՝ Բաբերդի առաջնորդ Անանիա Մ7 Վրդ. Հազարապետեան կախաղան հանուած է, եւ խարբերդի առաջնորդ Պասկ Վրդ. Տէր խորհրդեան Մայիսի սկիզբը ճամբայ հանած են եւ անգթօրէն սպաննած:

Պատրիարքի յաջորդ նամակէն կը տեղեկանանք որ Սեպտեմբերին սոսկալի Չարդ մը տեղի ունեցած է Էնկիւրիի մէջ, ուր նախ այլ մարդիկ, թիւով 500, Չարդած են իրենց առաջնորդին՝ Թէոդորոս վարդապետին, քահանաներուն, եւ Հայ Կաթողիկ տասը քահանաներու հետ միասին: Պատրիարքը նմանապէս կը տեղեկացնէ, եւ այս բոլորը իր յետագային գրած ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՅՈՒՇԵՐՄ հատորին մէջ ամփոփելով, թէ Բաղէշի երիտասարդ Արմաշական Սուրէն ՄՎրդ. Գալմեան 1400 տուն հայերու հետ միասին նահատակուած է: Նահատակուած են նաեւ Մուշէն 6500 տուն հայեր, եւ Ս. Կարապետ վանքի վանահայր՝ Վարդան Մ7 Վրդ. Յակոբեանը՝ իր 400 աշակերտներով:

Մուշի Առաքելոց վանքի վանահայր Յովհաննէս վարդապետ իր 40 միաբաններով եւ 200 աշակերտներով նահատակուած են: Նաեւ Մշոյ հայ կաթողիկէներու գերապայծառ Թօփալեան առաջնորդը: Նոյն նամակով Զաւէն Պատրիարք կը հաղորդէ Կարնոյ կացութիւնը, ուրկէ կ'ըսէ հինգերորդ կարաւանը ճամբայ հանուած է 1915 Յուլիս 18-ին վեցէն եօթը հարիւր հոգիներով, իրենց առաջնորդ՝ Արմաշի առաջին սերունդէն Սմբատ եպս. Սասնիթեանի գլխաւորութեամբ, Կարին-Էրզրումէն դուրս կը քշուին, եւ իբր թէ Սրբազանը Պոլիս պիտի դրկուէր՝ ձեռքն ալ ճամբորդութեան արտօնագիր մը տալով: Սմբատ եպիսկոպոս բացատրութիւն պահանջած է անակնկալ եւ մտահոգիչ տեղահանութեան մասին, եւ էրզրումի կուսակալ Թահսին կեղծաւորաբար ըսած է թէ՝ «հայերը պիտի դրկուին այնպիսի ապահով տեղ մը, ուր ժողովուրդը չի կրնար գէշութիւն ընել հայերուն»: Սմբատ եպիսկոպոսն ու հետեւորդներ անվերադարձ կը մեկնին:

Զաւէն Պատրիարք իր բոլոր թղթակցութիւնները եւ պատրիարքարանի լրիւ դիւանը իր օրով Մարտիլիոյ ճամբով, մի քանի սնտուկներով, ծովու ճամբով ուղարկած էր Երուսաղէմի Հայոց վանքը որպէս ապահովութիւն: Հոն կը մնան մինչեւ այսօր, եւ երբ Զաւէն Պատրիարք իր կեանքի վերջին շրջանին գրի առաւ իր ՅՈՒՇԵՐՄ, անձամբ Երուսաղէմ երթալով պրպտեց իր ուղարկած նամակներն ու հաստատագիրները եւ հրատարակեց զանոնք Գահիրէի մէջ: Ասկէ տաս տարիներ առաջ գիրքը անգլերէնի թարգմանուեցաւ որպէս մնայուն վաւերագրութիւն: Զաւէն Պատրիարքէն աւելի մանրամասն ու լրիւ գրի առաւ Թէոդիկ, երբ հրատարակեց իր ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՂ-ԳՈՒՄԸ նշանաւոր գիրքը՝ անուններով արձանագրելով 4000-է աւելի նահատակ հայ հոգեւորականներու եւ մանաւանդ Թուրքիոյ տարածքին պաշտօնի վրայ եղող ԲՈՂՈՐ քահանաներուն սպանդը, կեն-

սագրական մանրամասնութիւններով իւրաքանչիւրի մասին: Զաւէն Պատրիարքի եւ Թէոդիկի գոյգ ժամանակակից աղբիւրներէն քաղելով կուտամ նահատակ եպիսկոպոսներու եւ վարդապետներու շատ ամփոփ կենսագրականը, զանց առնելով թէ ինչ խժողուժ եւ անմարդկային կերպով նահատակած են մերօրեայ Սուրբ Հոգեւորականները: Գազանային այդ արարքները արձանագրուած կը մնան: Զանոնք արտայայտել կարելի չէ, սիրտ եւ լեզու պէտք է:

Նահատակ վեց  
Եպիսկոպոսներ

Խորով Եպս. Պէհրիկեան, 46 տարեկան: Արմաշական առաջին սերունդէն, Առաջնորդ Կեսարիոյ թեմին, եւ 1914 թուին եպիսկոպոս ձեռնադրուած, եւ Ս. Էջմիածնէն դարձին ամբաստանուած որպէս թշնամի երկրէն գրգռութիւն բերած ըլլալու յանցանքով: Բանտարկուած եւ դէպի Տիարպեքիր ճամբուն վրայ նահատակուած թուրք ոստիկաններու ձեռքով:

Սմբատ Եպս. Սասնիթեան, 44 տարեկան: Արմաշական՝ օծակից Խորովի: Եպիսկոպոս ձեռնադրուած 1910-ին որպէս Կարին-Էրզրումի Առաջնորդ: 1915 Յուլիս 15-ին Կարինի կառավարիչէն կանչուած է անորոշ պատճառով, եւ ամբաստանուած իբրեւ թէ Երզնկայի հայոց թեմին գէնք փութացնել առաջարկած ըլլալով: Բացայայտ այդ սուտէն ետք, Երզնկայ տարուած է, իր հետ նաեւ վեց քահանայ հայրեր անուններով յայտնի: Բոլորն ալ նահատակուած:

Ներսէս Եպս. Դանիէլեան 47 տարեան: Սիսի Կիլիկեան Աթոռի միաբան: Բանտարկուած Հայկալի եւ Դամասկոսի մէջ, եւ Մաղաքիա Օրմանեան Պատրիարքի երաշխաւորութեամբ Կ. Պոլիս տարուած: 1911-ին եպիսկոպոս ձեռնադրուած որպէս թեմակալ Ատանայի Թեմին: 1914-ին Առաջնորդ կարգուած Երզրաթի Թեմին: Յայտնի գրական հոգեւորական մըն էր Ներսէս եպիսկոպոս՝ «Սասկան Վարդապետ» ծածկանունով: 1919-ին կը ձերբակալուէր 500 մտաւորականներու եւ առեւտրականներու հետ միասին, եւ բոլորը կը նահատակուէին Սեբաստիոյ մօտ Թաշլըտերէ կոչուած տեղը:

Խորէն Եպս. Դիմաքսեան 50 տարեկան: Միաբան Սիսի Աթոռին, եւ եպիսկոպոս ձեռնադրուած 1911-ին՝ Երզրաթի թեմին վրայ, եւ յաջորդ տարին՝ միանգամայն Առաջնորդ Կիւրինի, ուր կը նահատակուէր Վեր. Պետրոս Սուղալեանի հետ:

Յակոբ-Աշոտ Եպս. Փափագեան 67 տարեկան: Վարած է Եգիպտոսի Թեմին առաջնորդութիւնը, եւ 1915-ին տառապանքի տակ վախճանած իզմիրի գիւնտերական բանտին մէջ՝ Կիլիկիոյ 1909 թուականի աղէտի մասին մատուցած իր տեղեկագրին մէկ պատճէնը իր թուղթերուն մէջ գտնուած ըլլալուն համար:

Եգնիկ Եպս. Գալիաքեան 55 տարեկան, ձեռնադրուած Արմաշ, եւ եպիսկոպոս՝ 1912-ին որպէս Առաջնորդ Բալուի Թեմին, ուր եւ կը նահատակուէր:

Նահատակ 12 Արմաշական  
Վարդապետներ

Կոմիտաս Վրդ. Սողոմոնեան, երաժշտագետ Մեծն Կոմիտաս, Մայր Աթոռի միաբան, եւ ապա փոխադրուած Կ. Պոլիս: Թէեւ բռնամահ չեղաւ, եւ սակայն աքսորուեցաւ 1915 Ապրիլ 24-ին, եւ աքսորէն

վերադարձին մնաց հիւանդանոց մտքի եւ հոգեկան մեծ ցնցումներու հետեւանքով: Վախճանեցաւ 1935-ին:

Մկրտիչ Վրդ. Զլղատեան Առաջնորդ Տիարպեքիրի: Մահակ Վրդ. Օտպաշեան Առաջնորդ Երզնկայի: Արտաւազ Վրդ. Գալինտէրեան Առաջնորդ Երեսիոյ: Պարզեւ Մ. Վրդ. Դանիէլեան 27 տարեկան Առաջնորդ Նիկոմիդիոյ եւ Պրուսայի: Պասկ Մ. Վրդ. Տէր խորհրդեան 33 տարեկան Առաջնորդ խարբերդի: Շաւարշ Վրդ. Մահակեան Առաջնորդ Սեբաստիոյ եւ Եվդոկիայի: Սուրէն Մ. Վրդ. Գալմեան 29 տարեկան Առաջնորդ Բաղէշի: Գեղամ Վրդ. Թէվէթէլեան 28 տարեկան Առաջնորդ Բաղէշի: Համբաստ վրդ. Եղիսէան 51 տարեկան Առաջնորդ Մամոսնի եւ ձանիկի: Գէորգ Մ. Վրդ. Թուրեան 43 տարեկան Առաջնորդական Տեղապահ Տրապիզոնի: Վարդան Մ. Վրդ. Յակոբեան 69 տարեկան Վանահայր Մշոյ Ս. Կարապետ Վանքին: Անանիա Մ. Վրդ. Հազարապետեան 54 տարեկան Առաջնորդ Երեսիոյ եւ Բաբերդի:

Վերապրող  
Հոգեւորականներ

Միւս կողմէն իրենց գերագոյն ձիգը ըրին հերոս այն բարձրաստիճան հոգեւորականները, որոնք մի կերպ վերապրեցան թուրքի եպիսկոպոսներէն: Նոյն նահատակներուն Արմաշի Դպրեւանքի հարազատ դասակիցներն ու վերապրող հոգեւոր եղբայրները, որոնք Երուսաղէմի եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան նորահաստատ կալքին՝ Անթիլիասի մէջ վերակերտեցին ընկճուած Հայ Եկեղեցին՝ բացառիկ նուիրումով եւ գիտակցութեամբ:

Պատրիարք կը չիշեմ զանոնք մէկ առ մէկ: Բոլորին գլուխն ու ամենէն տարեցը՝ ՍԱՀԱԿ ԽԱՊԱՅԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՅ: ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆԵԱՆ, հիմնադիր վերատեսուչ Արմաշի, եւ Պատրիարք Կ. Պոլսոյ: ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ, եպիսկոպոս, ուսուցչապետ Արմաշի եւ Պատրիարք Երուսաղէմի: ԲԱԲԳԷՆ ԿԻԼԻԿԻՅԻՐԵԱՆ եպիսկոպոս, դաստիարակ եւ կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: ԹՈՐԳՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ եպիսկոպոս, Առաջնորդ, եւ Պատրիարք Երուսաղէմի: ԶԱԽԷՆ Տ. ԵՂԻՍԵԱՆ, Պատրիարք Կ. Պոլսոյ: ՍՏԵՓԱՆՈՍ ՅՈՎԱ-ԿԻՄԵԱՆ, Առաջնորդ: ԳԱՐԵԳԻՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, Առաջնորդ եւ Պատրիարք Կ. Պոլսոյ: ՄԵՍՐՈՊ ՆԱՐՈՅԵԱՆ, Պատրիարք Կ. Պոլսոյ: ՓԱՌԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ, Առաջնորդ: ՂԵԻՌԵՂԻ ԴՈՒՐԵԱՆ, Առաջնորդ Ամերիկայի: ԳՐԻԳՈՐԻՍ ՊԱՄԲԵԱՆ, Առաջնորդ: ԳՆԷԼ ԳԱԼԵՄՔԵԱՆ, Առաջնորդ: ՇԱՀԷ ԳԱՍՊԱՐԵԱՆ, Առաջնորդ եւ վերատեսուչ Դպրեւանքի: ՄԱՄԲՐԷ ՍԻՐՈՒՆԵԱՆ, Առաջնորդ: ԵՐՈՒԱՆ ԳՐԵՏԱՃՅԵԱՆ, Առաջնորդ: ՊԵՏՐՈՍ ՍԱՐԱՃԵԱՆ, Առաջնորդ եւ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: ԵՂԻՇԷ ԿԱՐՈՅԵԱՆ, Առաջնորդ: ԽԱՂԱՊԱՅԵԱՆ, Առաջնորդ եւ Տեղապահ Տանն Կիլիկիոյ: ԱՐՏԱԻԱԶԳ ՍԻՐՄԷՆԵԱՆ, Առաջնորդ: ԵՓՐԵՄ ՏՈՂՄՈՒՆԻ, Առաջնորդ: ՄԿՐՏԻՉ ԱՂԱԻՆՈՒՆԻ, Առաջնորդ: Ահա հոյլ մը վերապրող բարձրաստիճան հոգեւորականներ, որոնք «Սրբազան վրէժը լուծեցին» Եղիշէ Պատրիարք Դուրեանի բառերով:


Իբր թէ պատուաւոր կերպով, Մեծի Տանն Կիլիկիոյ ձերուսագարդ Սահակ Բ. Նապայեան կաթո-



### ՅՈՎՅԱՆՆԵՍ (ՇԻՐԱԶ) ԵՐԵՎԱՆ (ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ)

#### ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Յովհաննէս Շիրազ ձեռնագրերը ծնած է 1935-ին Պէյրութ, Լիբանան: Յեղապահութեան հրաշքով ազատուած հաճընցի տարագիր իր հայրն ու մայրը Հայկազի որբանոցին մէջ ծանօթացած են և յետագային ամուսնանալով, ունեցած են 4 տղայ և 3 աղջիկ զաւակներ: Տղաներէն մէկը փոքր տարիքին կը մահանայ:



Յովհաննէս իր նախակրթութիւնն ու երկրորդական ուսումը ստացած է Պէյրութի Սահակեան վարժարանին մէջ: Պատանի հասակին մաս կազմած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Տիրուհի ուսանողական միութեան, իսկ յետագային անցնելով շարքերը, ետուն մասնակցութիւն փերած է կուսակցութեան գաղափարական և հայրենասիրական գործունէութեան տասնամեակներ շարունակ: Յատկապէս 1975-ին սկսած և գրեթէ մինչեւ 90-ական թուականները շարունակուող Լիբանանի քաղաքացիական կռիւներու ընթացքին անձնուիրաբար մասնակցած է՝ միասնական ճակատով հայկական թաղերու պաշտպանութիւնն ու անվտանգութիւնը ապահովող հայապաշտպան գործունէութիւններուն:

Պատանի հասակէն, որքան ազգային-կուսակցական աշխատանքներուն, նոյնքան սէր ու նուիրում տածած է լուսանկարչութեան հանդէպ, գոր յետագային պիտի հասցնէր արուեստագիտութեան մակարդակի: Արդարեւ, 1946-1947 շրջանին, հանրածանօթ գեղանկարիչ Փօլ Կիրակոսեանը եղած է իր գծագրութեան ուսուցիչը: Նոյն շրջանին աշակերտելով Ֆօթօ Սարոյին, առաջին իսկ վայրկեանէն սկսած է մօտէն շփուիլ ու խորանալ լուսանկարչութեան գաղտնիքներուն մէջ: Յետագային աշխատանքի անցնելով Պէյրութի ամենայայտնի լուսանկարչական հաստատութիւններէն՝ Սարաֆեան եղբայրներու, Ֆօթօ Փարամաունթի, Տէրունեաններու և Ֆօթօ Մանուկի մօտ, բնական ձիրքին միացուցած է ասպարէզին յատուկ լայն փորձառութիւնն ու զարգացումը: Հազիւ քանի մը տարի անց, այդ փորձառութիւնն ու զարգացումը պիտի յանգէր իր իսկ սեփական հաստատութիւնը եղող Ֆօթօ Շիրազի ծնունդին, որ տասնամեակներ շարունակ պիտի դառնար իր լուսանկարչական պրոֆեսիոն, ներշնչումներուն և նոր ուղիներուն հիմնաքարը:

Լիբանանեան կեանքէն վերցնուած և լուսանկարչական ինքնուրոյն արուեստի կնիքը կրող իր լուսանկարներուն գտած ճանաչումին շնորհիւ, 1964-ին կը հրաւիրուի Մոսկուայի երիտասարդական ֆորումին, ցուցադրելու համար զանոնք Մոսկուայի մէջ: Այդ առթիւ, շատերու կարգին ցուցահանդէս այցելած և զինք շնորհաւորած են Նիքիթա խրոշչեւը, Անաստաս Միկոյեանը, Երկիր մոլորակի շուրջ դարձած առաջին աստղանաւոր Եւրի Կակարինն ու կին աստղանաւորը Վալենտինա Թերեշչովան: Մոսկուայէն Հայաստան հրաւիրուելով, Յովհաննէսը եղած է առաջին սփիւռքահայը, որ 1964-ին լուսանկարչական ցուցահանդէս տուած է մայր հայրենիքի մէջ:

Յետագայ տարիներուն, քանի մը անգամ դէպի Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ զանազան

շրջաններն ու քաղաքները ճանապարհորդութիւններ կատարելով նկարած է պատմական Հայաստանի և Կիլիկիոյ դարաւոր ամրոցները, կոթողները, տաճարները, վանքերը, եկեղեցիները, խաչքարերը, լեռնային ու դաշտային բնական, գեղեցիկ տեսարանները, մերթ ընդ մերթ դիմակայելով թուրք ոստիկանութեան ձեռքաւորներու, բանտարկուելու և նոյնիսկ մահուան թափարկուելու սպառնալիքները: Վերոյիշեալ վայրերէն առնուած իր բազմաթիւ լուսանկարներուն նուիրուած ցուցահանդէսներ կազմակերպած է 70-ական, 80-ական թուականներուն ինչպէս Հայաստանի, Արցախի, նոյնպէս և սփիւռքի զանազան հայազգութիւններուն մէջ: Հայաստանեան ցուցահանդէսներուն ներկայ եղած և գրաւոր գնահատականներ տուած են հայրենի այնպիսի անուանի դէմքեր, ինչպիսիք են՝ ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Առաջինը, Վիկտոր Համբարձումեանը, մարշալ Բաղդասարեանը, Կարէն Դեմիրճեանը, Մարտիրոս Սարեանը, Սիլվա Կապուտիկեանը, Յովհաննէս Շիրազը, Պարոյր Սեւակը, Վարդգէս Համազասպեանը, դոկտ. փրոֆ. Վարդգէս Յարութիւնեանը, դոկտ. փրոֆ. Ղաֆադարեանը և ուրիշներ: Իսկ Լիբանանի, Սուրիոյ, Քուէյթի, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Կիպրոսի, Յունաստանի, Ֆրանսայի, Անգլիոյ և Միացեալ Նահանգներու մէջ կազմակերպած իր ցուցահանդէսներուն ներկայ գտնուելով իրենց գնահատանքը յայտնած են՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Խորէն Առաջինը, նախ Տան Կիլիկիոյ, ապա Ս. Էջմիածնի ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին վեհափառ Սարգիսեանը, երեսփոխան Խաչիկ Պապիկեանը, նկարիչ Փօլ Կիրակոսեանը, ՄԱԿ-ի կողմէ հայկական ցեղասպանութեան ճանաչման սատարող առաջին ռահվիրա՝ Շաւարշ Թորիկեանը, Երուանդ Պապայեանը, Գէորգ Գանտահարեանը, Սարգիս Վահագնը, Թորգոմ Փօթթաճեանը, Պէպօ Սիմոնեանը, Արմէն Դարեանը, Անդրանիկ վրդ. Կոստեանը, Թորոս Թորանեանը, Սվետլանա Տօնապետեանն ու մտաւորական, հասարակական այլ դէմքեր:

Յովհաննէս ձեռնագրերն ու պատմական Հայաստանէն, այսինքն՝ Վան, Վասպուրականէն, Տարօնէն, Մուշէն, Սասունէն, Պիթլիսէն, Տիգրանակերտէն, Պալազիտէն, Կարսէն, Անիէն, և Կիլիկիայէն, այսինքն՝ Սիսէն, Զէյթունէն, Հաճընէն, Կեսարիայէն, Ատանայէն, Մարաշէն, Այնթապէն, Քեսապէն, ինչպէս նաև Սուրիոյ Տէր-Չօր, Շէտտէտիէ շրջաններէն պատմաբժէք հրաշալի լուսանկարներ արած է: Սակայն, իր գլուխ-գործոցը՝ 1964-ին Մարտիրոս Սարեանի ընկերակ-

### ԸՆԿԵՐՈՋՍ՝ ԶԱԻԷՆ ԱՐՍԷՆ ՏԵՄԻՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

#### (ԻՐ ՄԱՐՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԹԻ)

#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Մեր հայրերու ուղղափառ հնչակեանութիւն դաւանող եւ կիրարկող նկարագրի արդիւնք եղող բարեկամութեան պատճառաւ Ջաւէնն ու ես ծանօթացանք իրարու անցեալ դարու վաթսուական թուականներուն եւ սերտ ընկերներ դարձանք: Ջաւէնի լրջութիւնն ու շիտակը տեսնելու եւ ընելու կարողութիւնը եղած է իր շրջանակին պատիւ բերող յատկութիւն մը որուն պատճառաւ զինք ճանչցողները յարգանքով եւ մեծարանքով կը վարուէին իր հետ: Ջաւէնի յատկութիւններէն ամենէն յիշատակելին իր ընկերասիրութիւնն ու ծառայասիրութիւնն էր: Ջաւէնը զիս ներկայացուց իր ընկերներուն եւ իր միջոցաւ ծանօթացայ ՀՄՄ ՄԱՄԻՍ ակումբի շրջանակին եւ իր հետ միասին մաս կազմեցի գիշերային ժամանց նկատուող Պասքէթպոլի խաղերուն՝ Սին Ըլ Ֆիլի դաշտերուն վրայ: Ու երբ Փաստաբան դարձայ, Ջաւէնի խնդրանքով ծառայեցի շատերուն իր ծառայասիրութիւնը գոհացնելու համար:

Յաճախ կ'այցելէի Ջաւէնին իր ծնողքին Մար Միխայէլի բնակարանը գտնուած շրջանին եւ հօրը՝ Պրն. Արսէնի հետ, ու եղբայրներուն՝ Նազոյի եւ Վանիկին հետ, կ'ունենայինք դաստիարակչական երեկոներ "մարդ ճանչնալու" կամ աւելի ճիշդը "մարդ կշռելու" նիւթեր արծարծելով:

Մեր ընկերութիւնը ընդհատուեցաւ երբ 1975-ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառաւ ես ստիպուեցայ լքել Լիբանանը եւ հաստատուեցայ Գանատա: Ջաւէնը սակայն կապը չկտրեց հետս եւ ամէն անգամ որ

Պէյրութէն Թորոնթօ այցելող բարեկամ մը կամ ծանօթ մը գտնէր, անոր հետ ինծի կը դրկէր հայկական եւ լիբանանեան գրքեր կամ մշակութային արժէք ներկայացնող առարկաներ: Ու երբ 2008 թուականի Նոյեմբեր ամսուան մէջ այցելեցի Լիբանան, Ջաւէնը եղաւ իմ անբաժան ընկերակիցը ու զիս Թրիփոլի տարաւ հոն հանդիպելու հօրս ու ընտանիքիս ամենէն մտերիմին՝ Հրայր Կարապետեանին հետ:

Այցելութեան տարի մը ետք, 2009-ին, Ջաւէնն ու ես կորսնցուցինք մեր մտերիմ ընկեր՝ Հրայրը: Ու անցեալ տարի Յունաստանի մէջ Ջաւէնին հետ տեսնուելու ու հանդիպելու մեր ծրագիրը դժբախտաբար չիրականացաւ եղբօրս կնոջ մահուան պատճառաւ, եւ ահա, տարի մը ետք, "Արարատ" օրաթերթի online լրատուութեան մէջ կարդացի սիրելի ընկերոջս՝ Ջաւէնի մահագրը: Ամբողջ էութեամբ ցնցուեցայ եւ կեանքիս խորանը լուսաւորող մարած մոմերուս աւելցաւ մոմ մը եւս ու լացի բախտիս համար որ Ջաւէնի մահուան թափօրին մասնակից չեղայ ծաղիկ մըն ալ ես գետեղելու անոր դագաղին վրայ ու հրաժեշտի խօսքս տայի:

Եղբայրական արցունքախառն համբոյրներով կ'ուզեմ դրոշմել ճակատը Ջաւէնի կնոջ՝ ամենաբարի եւ ամենահամեստ Ջարուկին, իր զաւակներուն, եղբայրներուն ու քրոջ, եւ զինք սիրելով սզացող բոլոր հարազատներուն եւ բարեկամներուն:

Իսկ՝ դուն, սիրելի ընկերս՝ Ջաւէն, իսկապէս կը սզամ քեզ, եւ քառասունքիդ առթիւ, ընդունելու յայ տողերս որպէս խունկ ու աղօթք եւ ծաղիկ թարմ շիրիմիդ վրայ:

ցութեամբ Արարատեան դաշտէն լուսանկարած Արարատն է, նկարին մէջ երեւցող երկու բարդիններով: Լուսանկար մը, որուն այսօր կարելի է հանդիպիլ աշխարհի բոլոր կողմերը, սակայն դժբախտաբար շատ քիչեր գիտեն, որ այդ եզակի նկարին հեղինակը Յովհաննէս (Շիրազ) ձեռնագրերն է: Ի դէպ նշեմ, որ «Շիրազ» միջնանունը ընդգրկած է՝ Յովհաննէս Շիրազի հանդէպ ունեցած իր անսահման հիացումին պատճառով:

Վերջացնելէ առջը պէտք է ըսել, որ հայրենասիրական, ազգասիրական, պահանջատիրական, նուիրումի ու գոհողութեան բարձր գիտակցութեան տէր, և այդ բոլորին կամաւորագրուած Յովհաննէսը, նոյնքան արժանաւոր մարդ էր, ամուսին, հայր, մեծ հայր, հօրեղբայր, մօրեղբայր, հարազատ ու ընկեր: Ունէր խղճամիտ, մաքուր սիրտ, անկեղծ, վստահելի, յարգալից նկարագիր: Բացառիկ սիրով կապուած էր իր ընտանիքին, զաւակներուն, թոռներուն, հարսին, հարազատներուն և շրջապատին: Կը ցուցաբերէր հանդարտ ու խոհական կեցուածք մը կեանքի անակնկալներուն հանդէպ: Իր յիշողութեան մէջ առանձին տեղ ունէին, յատկապէս, Լիբանան թողած իր

ընկերները, որոնցմէ կարիքի մէջ եղողներուն, ատեն-ատեն չէր զլանար իր նիւթական օգնութիւնը:

1965-ին հանդիպելով իր ապագայ կեանքի ընկերուհիին՝ Սօնային, կ'ամուսնանան և կ'ունենան երկու զաւակներ՝ Տարօնն ու Մարալը, որոնք յետագային իրենց կարգին ամուսնանալով, Յովհաննէսին ու Սօնային կը պարգեւեն հինգ թոռնիկներ՝ Արին, Փաթիլ, Նարեկ, Դալար, Սարին, որոնց հանդէպ բացառիկ սէր կը տածէր հանգուցեալը: Առանձին շնորհակալութեամբ ու երախտագիտութեամբ կը լինէր իր կնոջ՝ Սօնային, տղուն՝ Տարօնին, դստեր՝ Մարալին և հարսին՝ Շաքէին, իր նկատմամբ ցուցաբերած ջերմ խնամքն ու գուրգուրանքը:

Սիրելի Յովհաննէս, հիմա որ ազգիդ, հայրենիքիդ, կուսակցութեանդ, ընտանիքիդ ու հարազատներուդ հանդէպ լիուրի կատարելէ ետք պարտականութիւններդ, բնաւորութեանդ հաւատարիմ, սուսիկփուսիկ հրաժեշտ տուիր աշխարհին, սիրելիներուդ և ընկերական շրջապատիդ, մեր խնդրանքն է և մաղթանքը, որ Աստուած լոյսերու օթեւանին մէջ հանգչեցնէ քեզ և ամերիկեան հիւրընկալ հողը թեթեւ գայ վրայդ:

www.massispst.com  
daily news updates



### ԽՕՍՔԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐԵԼԻ Է ԸՍԵԼ ԸՆԿՃԱԽՏԵ ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴՈՒՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ընկճախտը (depression) սարսափելի հիւանդութիւն է, որ ամբողջովին կրնայ քայքայել մարդը: Անիկա կը վնասէ մարդուն թէ՛ հոգեպէս, թէ՛ ֆիզիքապէս: Ամենասարսափելի զգացումը, որ կ'ունենան ընկճախտով տառապող մարդիկ չհասկացուած ըլլալն է: Անոնց կը թուի, թէ աշխարհի վրայ ոչ ոք կը հասկնայ զիրենք:

Եթէ կը ճանչնաս մէկը, որ կը տառապի ընկճախտէ եւ դուն կը փափաքիս օգնել անոր, պէտք է նախ գիտակցիս, որ ընկճախտը հիւանդութիւն է:

Մտային առողջութեան մասնագէտները խորհուրդ կու տան՝ ընկճախտով տառապող մարդոց օգնելու համար՝ գործածել հետեւեալ արտայայտութիւնները:

-«Միշտ կողքիդ եմ»- Երբեմն ամենափոքր ժեստը կրնայ չափազանց կարեւոր ըլլալ: Միայն ըսելը, որ ոեւէ մէկուն կողքին ես ու գործով ատիկա ցոյց տալը կրնայ այնքան շատ օգնել, որ չես կրնար պատերազմել:

-«Դուն միմիայն չես»- Ընկճախտը կրնայ քեզի այնպիսի զգացում փոխանցել, կարծես առանձին ընթացքով փապուղիի մէջը: Կարեւոր է, որ սիրելի անձնաւորութեան ցոյց տաս, որ ան այդ ճանապարհը առանձին չ'անցնիր:

Շատ կարեւոր է ցոյց տալ անոր, որ իր զգացածը ժամանակակարգ է, եւ ան աւելի լաւ պիտի զգայ, երբ իր կողքին ըլլաս եւ զգայ, որ կրնայ վստահիլ եւ յոյսը վրադ դնէ:

-«Ասիկա քու սրբալի չէ»- Նախ դուն պէտք է գիտակցիս, որ ընկճախտը ընտրութիւն չէ եւ այնուհետեւ պէտք է ցոյց տաս ընկճախտով տառապող մարդուն, որ ան մեղք չունի իր այդ պարունակներուն համար: Այդպիսով դուն պիտի օգնես անոր յաղթահարելու այն զգացումը, որ ունի, քանի որ յաճախ անոր կը թուի, որ ինքը այդպէս կը զգայ: Երբ օրինակ՝ հարբուխով հիւանդ ես, դժուար է չիշել այն զգացումը, երբ առողջ էիր. այդպէս է նաեւ ընկճախտի ժամանակ, իսկ երբ ուղեղդ է հիւանդութեան հիմնական թիրախը, աւելի բարդ կը դառնայ յաղթահարել խնդիրը ու քեզի կը

թուի, թէ ամէն ինչ քու մեղքովդ է: Կրկին, չափազանց կարեւոր է գիտակցիլ, որ անոնք կը տառապին հիւանդութենէն այնպէս, ինչպէս՝ հարբուխէն:

Մասնագէտները կը նշեն, որ շատ կարեւոր է գիտակցիլ, որ ընկճախտը մարդու ընտրութիւնը չէ, այնպէս, ինչպէս հարբուխով հիւանդանալը ընտրութիւն չէ: Եթէ դուն չհասկնաս ասիկա, ընկճախտով մարդը կրնայ աւելի շատ տառապանք պատճառէ ինքն իրեն:

-«Ի՞նչ կրնամ ընել քեզի համար»- Ընկճախտով տառապող մարդուն օգնելու այլ միջոց է ցոյց տալը, որ ան կրնայ վստահիլ քեզի եւ որ դուն միշտ պատրաստ ես իրեն հետ ըլլալու, անկախ ամէն բանէ: Անոր առաջարկել որեւէ բան ընել: Կարեւորը ան պէտք է զգայ, որ դուն միշտ պատրաստ ես ամէն բան ընելու իրեն համար: Կարեւոր է, որ ան ինքզինք հանգիստ զգայ քեզի հետ:

-«Ի՞նչ կը մտածես»- Մասնագէտները կը նշեն, որ շատ կարեւոր է խօսիլ անոնց հետ, որոնք կը տառապին ընկճախտէ ու թոյլ տալ անոնց արտայայտել այն, ինչ կը զգան ու կը մտածեն:

Մի վախճան հարցնել անոր, թէ ինչ կը մտածէ:

Ընկճախտը կրնայ մահացու հիւանդութիւն ըլլալ: «Մի՛ հարցներ ու մի՛ պատմեր» մօտեցումը կրնայ ընկճախտով հիւանդ մարդոց մահացու վտանգի մէջ դնել: Հարցնելը երբեք մարդոց վատ դրութեան մէջ չի դնէր, անիկա կրնայ չափազանց կարեւոր ըլլալ ընկճախտով տառապող մարդուն օգնելու համար:

-«Ոչինչ ըսէ»- Երբեմն միայն ներկայութիւնդ կրնայ արդէն իսկ չափացանց մեծ աջակցութիւն ըլլալ մէկուն համար, որ կը տառապի այս հիւանդութենէն: Այն, ինչ կը կարծես, թէ աննշան բան մըն է, իրականութեան մէջ մեծ ազդեցութիւն կրնայ ունենալ:

Մարդոց օգնելու լաւագոյն միջոցը երբեմն պարզապէս անոնց կեանքին մէջ յայտնուելն է: Ատիկա թոյլ կու տայ մարդուն տեսնել, որ դուն միմիայն չես ձգեր զինք, որ անոր կողքին ես, ինչ ալ ըլլայ ու պատրաստ ես մինչեւ վերջ անոր կողքին ըլլալու:

### ԴԵՂԵՐԸ ՓՈՒՍԱՐԻՆՈՂ ՀՐԱՇՔ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Ճիշդ ուտելու միջոցով կարելի է շատ հիւանդութիւններ, եթէ ոչ բուժել, գոնէ առնուազն «մեղմել» մարմնին վրայ անոնց ունեցած ազդեցութիւնը:

Դեղերու փոխարէն, յաճախ, հանդէս կու գան սովորական ուտելիքները: Պէտք է միայն գիտնալ, թէ որ ուտելիքին յատկապէս ուշադրութիւն դարձնել: Կը պարզուի, որ անոնք ոչ պակաս արդիւնաւէտ կրնան ըլլալ, քան դեղերը եւ կ'օգնեն բուժուիլ առանց կողմնակի ազդեցութիւններու եւ դեղարան-

ներ այցելելու անհրաժեշտութեան:

Որպէսզի ուտելիքներէն օգուտ ստացուի, նախ անհրաժեշտ է գիտնալ, թէ ինչ հիւանդութիւններէն անոնք կրնան ազատել: Ասիկա կ'օգնէ այդ ուտելիքները ընդունիլ ամենամանրամասն պահուելու եւ ստանալ առաւելագոյն արդիւնք:

Աւանդական ուտելիքներ, որոնք կարելի է օգտագործել իբրեւ բնական դեղեր:

Ձմերուկն ու կասիան՝ ասիիրիսի փոխարէն. Ասիիրիսը բնական չուժեան մէջ ամենատարածուած

### ԿՆՈՋ ԴԱԲԱՃԱՆՈՒԹԵԱՆ 7 ՅԱՅՏԱՆԻՇ

Կարծիք կայ, որ, եթէ ամուսինը կը դաւաճանէ, ուստի անոր կինը այդ մասին կ'իմանայ ամենավերջինը: Սովորաբար նման պարագաներու տղամարդիկ ընդհանրապէս տեղեակ չեն ըլլար ատոր մասին:

Պատճառը այն է, որ ուժեղ սեռի ներկայացուցիչները պակաս ուշադիր են մանրուքներու նկատմամբ:

Կնոջ դաւաճանութեան 7 հիմնական յայտանիշ:

1. Հետաքրքրութիւններու կտրուկ փոփոխութիւն. Եթէ կինը սովորաբար անտարբեր եղած է ֆուլթպոլի հանդէպ եւ յանկարծ դարձած է այդ ոլորտին գիտակ կամ աշխույժ երկրպագու, ուստի մտածելու տեղ կայ:

2. Ճաշակներու փոփոխութիւն. Եթէ քանի մը տարուան համատեղ կեանքէ ետք կինը կը սկսի նկատել, որ ամուսինին ինքնաշարժը այդքան ալ յարմարաւէտ չէ, իսկ իրերը արդէն նորաձեւ չեն, կ'արժէ ատոր ուշադրութիւն դարձնել: Յատկապէս, եթէ կինը երբեք ինքնաշարժներով չէ հետաքրքրուած, եւ դեռ երկու շաբաթ առաջ այդ նոյն իրերը անոր համար յարմարաւէտ ու ոճային էին:

3. Ոճի փոփոխութիւն. Կինը անսպասելիօրէն ներկած է մազերը եւ փոխած սանտրուածքը: Կամ, հաւանաբար, ան սկսած է սննդականոն պահել եւ բաւական նիհարցած է:

### ԵՐԵՒՈՅԹՆԵՐ, ԶՈՐՍ ԿԻՆԵՐԸ Կ'ԱԿՆԿԱԼԵՆ ՏՂԱՄԱՐԴՈՑՄԷ

1. Ինչպէս կնոջ, այնպէս ալ տղամարդու մարմինը պէտք է ըլլայ խնամուած:

2. Կիները նոյնպէս կը փափաքին, որ իրենց կողքին կանգնած տղամարդը ըլլայ բարետես, բարեկազմ, մկանուտ եւ ուժեղ:

3. Տղամարդը պէտք է հաճելի բուրէ:

4. Չծխել եւ ծամօն չծամել: Շատ տհաճ է նայիլ ծամօն ծամող տղամարդուն: Կիներ չեն սիրեր նաեւ իրենց կողքին տեսնել մշտապէս հաչոցող տղամարդ:

5. Կիներ չեն սիրեր, որ տղամարդիկ զարդեր կրեն: Կարելի է բարակ վզնոց դնել, բայց ամէն ինչ պէտք է չափի մէջ ըլլայ: Գոհեցուցիչ չէ, որ մէկուն հաճելի է:

Ուշադիր եղէք: Ատիկա կնոջ դաւաճանութեան ակնառու յայտանիշներէն մէկն է:

4. Լաւ տրամադրութիւն. Կնոջ վարքագիծը շատ բան կը մատնէ: Եթէ ամուսինը արդէն շաբաթներ է, որ կը խոստանայ նորոգել որեւէ իր, սակայն այդպէս ալ չէ կատարած զայն, իսկ, այսուհանդերձ, կինը կը շրջի սենեակներուն մէջ ու երգեր կ'երգէ, տուն կը վերադառնայ անսովոր կենսաբախտութեամբ, ուրեմն՝ սխալ բան կայ:

5. Սէր. Հետաքրքրական է, երբ կինը կը սկսի ամուսինին հանդէպ դրսեւորել ոչինչի հետ կապուած յատուկ հոգատարութիւն եւ սէր: Կամ՝ դադարած է սղոցել ամուսինի ջիղերը եւ կը ձգէ, որ ան հանգիստ ֆուլթպոլ դիտէ: Ամենայն հաւանականութեամբ՝ այդ փոփոխութիւնները ամուսինին համար չեն:

6. Զղային պատասխաններ՝ պարզ հարցերուն: Երբեմն, պատասխանները յստակօրէն մտածուած են, եւ կը չիշեցնեն դպրացական դասագիրքերու պատմուածքները:

7. Հեռախօսի նկատմամբ սուր հետաքրքրութիւն. Կինը անընդհատ կը հետաքրքրուի՝ արդեօ՞ք իրեն ոեւէ մէկը չէ գանգահարած: Ան սկսած է յաճախակիօրէն հեռախօսով առանձնանալ, իսկ երբ ամուսինը խօսակցութեան ժամանակ կը մօտենայ, կինը կ'ամ կ'անջատէ կամ ալ անփութօրէն կ'ըսէ, որ սխալ գանգահարած էին:

6. Տղամարդը նոյնպէս ցանկալի է, որ միշտ ժպտայ: Անոր ակունակը պէտք է միշտ առողջ ու ճերմակ ըլլալ: Ասիկա կը յուշէ տղամարդու առողջ եւ գրաւիչ ըլլալու մասին:

7. Ուժեղ սեռի ներկայացուցիչները նոյնպէս պէտք է հետեւին իրենց մազերուն:

8. Գեղեցիկ կեցուածք եւ քալուածք: Տղամարդու քալուածքը պէտք է հաստատուն, վստահ ու թեթեւ ըլլայ: Կիներ նոյնպէս մեծ ուշադրութիւն կը դարձնեն այս երկու հանգամանքներուն:

9. Կիներ չեն սիրեր, որ տղամարդիկ պայուսակ կրեն:

10. Տղամարդը պէտք է ունենայ զեղեցիկ մորթ:

դարձնեն իրենց ոտքը կամ շտապելու պահուն ոտքով կը հարուածեն գրասենեակային կահույքին:

Տուրմը՝ «Խթանիչներ»-ու փոխարէն. Գեղեցիկ փաթեթաւորումով քաղցր հակաընկճախտային, շատերս արդէն գիտենք, թէ ինչով պէտք է յաղթահարենք յանկարծահաս ճնշումը եւ եղանակի հետ կապուած ճնշախտը: Բժիշկները կը հաստատեն տուրմին նման ազդեցութիւն ունենալը:

Ստեպղինը եւ իւզոտ ձուկը՝ իբրեւ հակօքսիտանդ. Ձեր երիտասարդութիւնը հինգ տարիով երկարաձգելու կրնայ օգնել սովորական ստեպղինով եփած ձուկը:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ  
ՊՐՆ. ՍԵՐՈՔ ԳԱԼԹԱՔԵԱՆ ԸՆդ ՕՐԴ. ԱՄԱՆՏԱ ՍԼԵՅ  
31 Հոկտեմբեր 2015, Պաթոն Ռուժ, Լուիզեանա  
Սեր Զերմ շնորհաւորութիւնները նորապսակ զոյգին եւ մասնաւորաբար ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ Տէր եւ Տիկ. Ընկ. Վազգէն եւ Հայկօ Գալթաքճեաններուն

SYRIAN ARMENIAN RELIEF FUND  
Save Support Sustain  
Syrian Armenian Relief Fund  
P. O. Box 1948  
Glendale, CA 91209-1948  
www.syrianarmenianreliefund.org



### ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19  
 Այս շաբաթ նախկին բարեկամ մը կարելի է պատահմամբ հանդիպի քեզի: Սիրալիր վերաբերմունքով դիմադարձե՛ հակառակորդներուդ, որոնք միայն կը փափաքին քեզի նեղութիւն տալ: Լաւ շաբաթավերջ մը կը սպասէ քեզի:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,9,17,25,33

**ՅՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20  
 Այս շաբաթ բարիք ընելով շատ պիտի ուրախանաս: Դրական ձեւով դիմագրաւէ քեզի վերաբերող հարցերը եւ մի գանգատիր: Ձաւակներուդ նկատմամբ հոգատար եւ ներող եղիր: Առողջութեանդ լաւ նայէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,11,21,30,37

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20  
 Այս շաբաթ կեանքիդ կարելոր մէկ շրջանը պիտի բաժնեկցիս անձի մը հետ: Հակամէտ ես մեղադրելու շուրջիններդ դուն քեզ արդարացնելու համար: Այցելութիւն մը պիտի կատարես:  
 Բախտաւոր թիւերդ են: 5,14,25,33,35

**ԽԵՅՉԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22  
 Այս շաբաթ ազդեցիկ պատահարներ քեզ պիտի զգաստացնեն հասկնալու կարգ մը իրականութիւններ: Կասկածամիտ ըլլալով վստահութիւնդ տկարացած է: Լաւ խօսքերով բարձրացուր քեզմէ տկարները:  
 Բախտաւոր թիւերդ են: 8,10,20,25,30

**ԱՌԻԺ** Յուլիս 23-Օգոստոս 22  
 Այս շաբաթ գործի դրութիւններդ քիչ մը պիտի ծանրանան առաւել յոգնեցնելով քեզ: Կողակիցիդ հետ ունեցած կապդ աւելի պիտի ամրանայ: Կենցաղդ կրնաս բարեփոխել շատ պարզ քայլերով եւ լաւատեսութեամբ:  
 Բախտաւոր թիւերդ են: 8,12,18,22,26

**ԿՈՅԱ** Օգոստոս 22-Սեպտեմբեր 22  
 Այս շաբաթ շատ մօտէն պիտի ճանչնաս գործակիցներդ մին եւ ընտանեկան յարաբերութիւն պիտի հաստատես հետը: Ճամբորդութեան մը ընթացքին, աթոռակից պիտի ըլլաս համբաւաւոր անձնաւորութեան մը հետ:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,10,14,25,29

**ԿՇԻՈՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22  
 Այս շաբաթ մտերմաբար, անձնական հանդիպում մը պիտի ունենաս հակառակ սեռի անձի մը հետ: Ծածուկ գանձերուդ վրայ շատ խորհելով, երբեմն քունդ կը փախցնես: Բախտդ շուտով պիտի ժպտայ:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,16,17,24,33

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21  
 Այս շաբաթ խօսակցութիւններ պիտի ունենաս ապագայիդ նկատմամբ, առիթը օգտագործէ ապագադ ապահովելու: Քաղաքական գիտութիւնդ քեզ պիտի առաջնորդէ կեանքի ասպարէզի լաւ արդիւնքներու:  
 Բախտաւոր թիւերդ են: 5,15,28,29,34

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21  
 Այս շաբաթ շուրջը շատ առիթներ պիտի ներկայանան ունենալու ուրախ եւ խաղաղ ընտանեկան բոյն մը կազմելու: Մտիկ ընելը շատ կը սիրես, սակայն պիտի չկարենաս արտայայտուիլ զգացումներդ: Ինքնավստահ եղիր:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,15,16,28,29

**ԱՅԾԵՂԶԻԻՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19  
 Այս շաբաթ միւսական եկամուտդ մեծապէս պիտի փոխուի: Շատ հարցումներ կան մտքիդ մէջ, որոնց պատասխանները դիրքին պիտի չըլլայ գտնելը: Տեսողութիւնդ տկարանալով, նեղութիւն պատճառէ քեզի:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,5,11,27,36

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18  
 Այս շաբաթ շատ յոգնածութեանդ պատճառաւ, ընդհանրապէս տանդ մէջ պիտի անցնես օրերդ: Նամակ մը շփոթութեան պիտի մատնէ քեզ, խորհելով թէ վաւերաթուղթի մը պահանջումն է: Լաւագոյն բարեկամդ քեզմէ երբեք հեռու չէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 5,7,14,23,34

**ՉՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20  
 Այս շաբաթ պաշտօնական հրաւեր մը պիտի ստանաս, որմէ շատ պիտի քաջալերուիս: Դժուարին պայմանէ մը շուտով պիտի ձերբազատուիս եւ ինքզինքդ պիտի գորացնես: Մարգական խաղերու ներկայ գտնուիլը շատ կը սիրես:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,9,18,26,33

### ՔՍԱՆ ՀԱՋԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՓՈՒՍՈՒՈՂ ՔՍԱՆԻ ԱՌԵՂՈՒԱԾԸ

Շարունակուած էջ 7-էն

*վերցնի: Մենք փակուողու առջեւ-լենք, ստիպուած ենք բռնարարք-ները դիմում եւ ոչ թէ այն բանի համար, որ գէնք ենք սիրում»:* Եւ ապա, նոյն դատավարութեան ժամանակ՝ «վաթսուն տարուայ խաղաղ, սակայն անարդիւնք ջանքերից յետոյ կարծում ենք, որ զինուած պայքարը հիմնախնդիրները արծարծելու, այն շրջափակող լուծութեան պատը փշրելու գլխաւոր միջոցն է»:

Որքան էլ նման գործելակերպը առաջին հայեացքից անյարիր թուայ մարդասիրական գաղափարների տեսանկիւնից, այնուամենայնիւ, փաստ է, որ այն ծնւում է Պատմական արդարութեան նկատմամբ աշխարհի հզօրների՝ քաղաքական հաշուենկատութիւնից բխող քար անտարբերութիւնից: Մի բան, որ հաստատում է Սողոմոն թեհ-լերեանի նկատմամբ գերմանական դատարանի ընդունած արդարացման որոշումով, միջազգային մի շարք քաղաքական կառույցների ու շրջանակների կողմից հայ վրիժառուների նկատմամբ դրսեւորած ներողամիտ ու ըմբռնողական մօտեցումով:

Գրքում Գրիգոր Զանիկեանը բերում է հայոց խղճի մեծերի՝ Շարլ Ազնաւուրի, Անրի Վերնոյի, ինչպէս նաեւ Միսաք Մանուշեանի այլու՝ Մելինէ Մանուշեանի տեսակէտը եւս, ըստ որի՝ հայ վրիժառուները ոչ թէ հաբեկիչներ են, այլ՝ արդարամարտիկներ: Այնուամենայնիւ, բնորոշ է Գէորգ Գիւզելեանի օրագրային մի նկատառումը եւս՝ «Ես այնքան ողջախոհութիւն ունէի, որ հասկանայի՝ մեր յաղթանակը, եթէ անգամ յաղթանակ է, սոսկ բարոյական է»: Սակայն, ուշադրութիւն դարձնենք, այդ ամէնը այն ժամանակ, երբ մենք դեռ եւս լիովին անկախ պետականութիւն չունէինք: Բայց ժամանակները փոխուում են, եւ այժմ, երբ Հայաստանի անկախ Հանրապետութիւնն արդէն պատմական իրողութիւն է ու Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի հանգրուանում, ի լուր աշխարհի արդարամիտ հանրութեան, հանդէս է եկել Համահայկական հռչակագրով, որտեղ նախանշուած են Համազգային պահանջատիրութեան Ծրագրի կարեւորագոյն ուղղութիւնները՝ աշխարհում տեղի ունեցող արդիական խոշոր տեղաշարժերի հաշուառմամբ, կարծում ենք պէտք է լրջօրէն խորհել մոլորակի աւելի քան տասնիլիոնանոց հայութեան միասնական ռազմավարութեան շուրջ:

Ժանրային առումով Գր. Զանիկեանն իր գիրքը անուանել է վիպապատում: Ըստ հուլիան, այն կարելի է որակել նաեւ գեղարուեստավաւերագրական արձակ, քանզի նրանում օգտագործվել են ինչպէս գեղարուեստական պատկերների ու կերպարների ստեղծման, առանձին դրուագների նկարագրութեան, այնպէս էլ վաւերագրութեան (դատավարութեան սղագրութիւն, օրագրութիւն) տարրեր ու հատուածներ: Հետաքրքիր մտայնացում է, որ հայ ազատագրական պայքարի տարբեր դրուագները պատկերող գլուխները բացուած-ուղեկցւում են 20-ի կախաղան բարձրացնելու

նախապատրաստութեան դրուագներով՝ անընդհատ բուն նիւթի վրայ սեւեռելով ընթերցողի ուշադրութիւնը, միաժամանակ պահպանելով պատու մի թեմատիկ ու գեղարուեստական ներքին միասնութիւնը:

Գրիգոր Զանիկեանին չաջողուել է փաստավաւերագրական ժանրի սահմաններում ստեղծել իրական հերոսների գեղարուեստական ընդհանրացված կերպարներ, որոնց մէջ են Հնչակեան կուսակցութեան հիմնադիր-առաջնորդներ Աւետիս եւ Մարո Նազարբեկեանները, Մեծն Մուրատը, Փարամազը, Կովկասի փոխարքայ Գոլիցինի խորհրդական, ապա Պաքուի նահանգապետ հայտեսաց Նակաշիճէի նկատմամբ հայութեան արդար դատավճիռն իրագործած Դրօն, մարտնչող մուսալեռացիների փրկարար Ֆրանսական նախ սպայ Շառլ-Տիրանը՝ Վահան թեքէեանի եղբօր թոռը, 1984 թ. Փարիզում իրականացուած «Վան» գործողութեան հերոսներից Վազգէն Սիսլեանը, Գէորգ Գիւզելեանը...

Ուշագրաւ է, որ հեղինակը սուրբ չի տուել թուրքի կերպարի հասարակացուած մեկնաբանութիւններին, ըստ այդմ գրքում կան նաեւ խիղճը չկորցրած թուրքերի (թարգմանիչ Սիւրեյա պէյ, դատարանի փոխնախագահ Սուրշի պէյ) կերպարներ: Նկատելի է Զանիկեանի լեզուաշինական ջանքը եւս, որով շրջանառութեան մէջ են դրուել մինչ այժմ քիչ գործածական, կամ նորակազմ բառեր ու արտայայտութիւններ, ինչպէս՝ դեղձայտ հարսուկ, միջնամպած հայեացք, խտախտուկ, փափկանկողին, ոճրափորձ, համրանքախաղ, ընծավարձ, արկակոծութիւն, մակդիրային անակնկալ գործածութիւններ՝ անգոյն պատասխանեց, ձայնը մզացրեց, սորուն ժպտաց եւ այլն:

Ընդգծենք, որ Հայրենիքի ազատագրութեանը նուիրուած հերոսներից ոմանք նաեւ գրող, հրապարակագիր, թատերագիր էին, ինչպէս հենց Փարամազը, Միհրան Տամատեանը, երիտասարդ Հրանդ Եկաւեանը: Ի դէպ, նա արաբկիրցի Արամ Աչըզպաշեանի կրտսեր գինակիցն էր դեռ Արաբկիրից: Պահպանուել է Հրանդ Եկավեանի բանտում գրած բանաստեղծութիւնը՝ «Գաղափարս չմեռնի» վերնագրով, որն աւարտուում է հետեւեալ խորհրդանշական քառատողով. Ես մեծ վերքով խոցոտուած ազատութեան մոտն արի, Մէկ հարուածով պիտ մեռնիմ, բայց բռնութեան ընդվզող իմ հոգիէս թիւ տուող գաղափարս առ չաւէտ Կկուզեմ ապրիլ ազգիս հետ մինչ յաղթանակն փառապանծ: Բանաստեղծութիւնը մի թղթի մէջ ամփոփելով՝ Հրանդը յանձնել է իրեն այցի եկած քրոջը, որը եւ փրկել ու յետագայում հրապարակել է այն:

«Քսանն ու քսան հազարները» գրքով Գրիգոր Զանիկեանը հաստատում է Հայ դատի արդարացի լուծման պահանջատիրութեանը, ազգային ազատագրական պայքարի հերոսական դրուագների գեղարուեստական արտացոլմանը իր վաղեմի նուիրուածութիւնը, «ստիպելով» ընթերցողին հետաքրքրութեամբ սպասելու իր նոր գրքերին, որոնք, որպէս կանոն, շատ չեն ուշանում:



### ՅՈՒՂԱՐԿԱԴՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՂՈՒՄ ԸՆԿԵՐ ՅՈՎՅԱՆՆԵՍ ԵՐԵՎԱՆԻ (ՇԻՐԱԶ)

Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան գաղափարանուէր եւ բազմամեայ գործիչ ու արուեստագէտ լուսանկարիչ ընկ. Յովհաննէս ձէրէճեանի (Շիրազ) յուղարկաւորութեան տիրուր արարողութիւնը տեղի ունեցաւ անցեալ Զորքաբերի Հոկտեմբերի 28ին, 2015, Պրայէնքի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ: Տան կարգի արարողութեանց նախագահեց Արեւմտեան Թեմի առաջնորդ գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ներկայ էին նաեւ հանգուցեալի եղբայրը գերշ. Տ. Տարօն Եպս. ձէրէճեան (Մարտիրոսյէն), Գերշ. Եփրեմ Արք. Թապաղեան, Հայ Կաթողիկէ Համայնքի առաջնորդ Գերշ. Միքայէլ Եպս. Մուրատեան, Հոգշ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարամեան, արժանապատիւ քահանայ հայրեր, Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի անդամներ, այլ կառույցներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ հանգուցեալի հարազատներն ու բարեկամները:

Հանգուցեալ Յովհաննէս ձէրէճեանի մասին սրտի խօսքերով հանդէս եկաւ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Յովնան Արք., Հայ Կաթողիկէ Համայնքի առաջնորդ Գերշ. Միքայէլ Եպս. եւ իր եղբայրը՝ Գերշ. Տարօն Եպս.: Բոլոր խօսք առնողներն ալ նշեցին Յ. ձէրէճեանի բարեմասնութիւնները որպէս իր ընտանիքին եւ ազգին նուիրուած անխոնջ մշակ, հասարակական բեղուն գործիչ եւ արուեստագէտ լուսանկարիչ:

Թաղման կարգը տեղի ունեցաւ Հոլիուու Ֆորէսթ Լոն գերեզմանատան մէջ: Այստեղ Հնչակեան դրօշով պարուրուած Յովհաննէս ձէրէճեանին դազողին առջեւ, Արեւմտեան Ամերիկայի Վարիչ

Մարմնի անուսով խօսք առաւ ընկ. Գաբրիէլ Մոլոյեան: Ան առանձնապէս շեշտեց մեզմէ անդարձ հեռացող ընկերոջ գաղափարանուէր անխոնջ գործիչի կարեւոր ներդրումները, 50-ական թուականներուն Տիրուրի Ուսանողական Միութենէն ներս ցուցաբերած նոր սերունդի հայրենասիրական դաստիարակութեան վսեմ գործին մէջ: Իսկ որպէս արուեստագէտ լուսանկարիչ խիզախութիւն ունեցաւ լիբանանահայ առաջին արհեստավարժ անձն ըլլալով, արեւմտեան Հայաստանի մեր բռնազրաւուած յուշարձանները լուսանկարելու:

Այնուհետեւ «Տուր ձեռք ընկեր» խմբերգով հողին յանձնուեցաւ վաստակաշատ ընկերոջ մարմինը:

Աւելի քան 200 հոգիներ ներկայ եղան Յովհաննէս ձէրէճեանի յիշատակին սիրոյ սեղան-հոգեճաշին, Կլենտէյլի «Գարուսէլ» ճաշարանին մէջ: Գերշ. Տարօն Եպս. ձէրէճեանի սեղաններու օրհնութեան աղօթքէն ետք հանգուցեալի կենսագրականը կարգաց հանրածանօթ լրագրող Մարգիս Մաճառեան: Հ.Մ.Մ.ի վեթերաններու անուսով խօսք առաւ ընկ. Տիրան Սարաֆեան: Սրտի խօսքով հանդէս եկաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ՝ ընկ. Յարութ Տէր Դաւիթեան:

Անոնք հանգուցեալի մասին իրենց յուշերը պատմելով դրուատեցին իր բարեմասնութիւններն ու արժանիքները եւ յատկապէս ազգօգուտ եւ հայրենասիր ծառայութիւնները:

Աւարտին ներկաներն իրենց հետ տարին յատկապէս այդ միջոցառումին համար պատրաստուած ֆօթօ Շիրազի (Յ. ձէրէճեան) «Արարատ»ը յատնի լուսանկարէն մէկական օրինակ, որպէս մնացուց յիշատակ:

### ՅԱՄԱԿՅԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՁԵՐԷՅԵԱՆԻ (ՇԻՐԱԶ) մահուան տիրուր առիթով Լոս Անձելոսի «Նոր Վերնատուն»ի անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աջրիին եւ համայն ընտանեկան պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի 140 տողար կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

### ԴՈՎՏ. ՅՈՎՅԱՆՆԵՍ ԱՅՍԱՐԱՆԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

կանէն ի վեր հայ ազգը իր յոյսը դրած է խաչեալ Քրիստոսի վրայ, որ կենդանի է եւ առատօրէն կեանք կը պարգեւէ: Թող Քրիստոսի Սուրբ Խաչը պահպան ըլլայ ձեր վրայ»:

Ապա եպիսկոպոս հայրը շնորհակալութիւն յայտնեց եկեղեցւոյ հովիւներուն, օրուան բանախոսուհի՝ Տիկ. Նարիս Խալաթեան-Պեթելին, Մշակութային յանձնախումբին, Տիկնանց Միութեան եւ բոլոր ներկաներուն: Մասնաւորապէս գնահատեց արուեստական բաժնի «Երկնային Երազներ» արուեստագիտուհիներ՝ մայր ու աղջիկ Սօսի եւ Սալփի Քերթնեանները, որոնք մինչեւ հիւրասիրութեան

աւարտը իրենց մեղմ նուագով հաճելի մթնոլորտ ստեղծեցին սրահէն ներս:

Ապա տեղի ունեցաւ գինեձօնի արարողութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը բերին ներկայ հոգեւորականները:

Մասնաւորաբար կը շնորհաւորենք Տիկ. Նարիս Խալաթեան-Պեթելը իր կատարած բժախնդիր աշխատանքին համար եւ կը գնահատենք իր անսակարկ նուիրումը հայ Կաթողիկէ եկեղեցւոյ եւ ուրախութեամբ կ'ըսենք. «վարձքը կատար Տիկին Նարիս»:

Ներկաները երկար ատեն յամեցան սրահին մէջ եւ լիցքաւորուած հոգիով վերադարձան իրենց տունները:

### ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՆԱԶԱՐԷԹ ԱՂԱՊԱՀԵԱՆ

Հանգուցեալ ՆԱԶԱՐԷԹ ԱՂԱՊԱՀԵԱՆԻ մահուան առջին տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Նոյեմբեր 8ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd., Pasadena, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝
- Նարինէ Աջապահեան
- Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նորա Աջապահեան եւ զաւակունք
- Այրի Տիկին Անգինէ Աջապահեան եւ որդին
- Այրի Տիկին Մարիա Ղազարեան եւ զաւակները (Պէյրութ)
- Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեան եւ զաւակները
- Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեւորձ պիտի մատուցուի եկեղեցւոյ «Եկաւեան» սրահին մէջ:
- Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

### ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՃՈՐՃ ԹԱԻՈՒԳՃԵԱՆ

Հանգուցեալ ՃՈՐՃ ԹԱԻՈՒԳՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Կիրակի, Նոյեմբեր 8, 2015 Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd, Pasadena, յաւարտ Ս. պատարագի:

- Սգակիրներ՝
- Այրին՝ Տիկ. Ալին Թաւուզեան
- Ձաւակը՝ Շահէ Թաւուզեան
- Ձաւակը՝ Տէր եւ Տիկ. Մայք եւ Հերմինէ Թաւուզեան եւ զաւակները Արման եւ Քրիստին
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Նուպար եւ Անի Թաւուզեան եւ դուստրը Շողիկ Թաւուզեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Ձապէլ Թաւուզեան եւ դուստրը Մէյրի
- Քոյրը՝ Նուարդ Թաւուզեան
- Եղբոր կին՝ Լորիս Թաւուզեան եւ զաւակը Տէր եւ Տիկ. Կրեկ եւ Հիլտա Թաւուզեան եւ դուստրը՝ Ժիզել
- Տէր եւ Տիկ. Մարք եւ Լինտա Թաւուզեան եւ զաւակները Նիքըլըս, Անտու, Մաթիւ եւ Մարք
- Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Վարդուհի Թաւուզեան եւ դուստրը՝ Վիքթորիա եւ Վիլիան
- Տէր եւ Տիկ. Սթիւ եւ Նաթալի Քինթանար
- Տէր եւ Տիկ. Կայ եւ Լենա Լոպիանքօ եւ զաւակները Արիանա եւ Կայ (Նիւ Եորք)
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Էմմա Կէտիկեան եւ զաւակները Հրանդ, Լենա եւ Անի (Լիբանան)
- Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Անահիտ Կէտիկեան (Լիբանան)
- Եւ համայն Թաւուզեան, Պալմանուկեան, Գազանճեան, Խաչատուր, Ֆաքիճեան, Մարգիսեան, Կէտիկեան, Միլզախանեան ընտանիքները եւ հարազատներն ու բարեկամները:
- Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
 SERVING BATON ROUGE SINCE 1979

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք  
**«Մասիս» Շարաքաթերթին**  
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
 massis2@earthlink.net



### ՌՈՆԱԼԴՈՒՆ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԹՈՓ-5 ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ԼԱԲԱԳՈՅՆ ՌՄԲԱՐԿՈՒ

Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն, Պրիմերայի 10-րդ տուրում գրաւելով «Լաս Պալմասի» դարպասը, երրորդ տեղ է բարձրացել Եւրոպայի 5 առաջատար (Անգլիա, Սպանիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսա) առաջնութիւնների բոլոր ժամանակների լաւագոյն ու բարձրակուների ցուցակում: Պորտուգալացի հաւաքականի աւագն իր գոլերի քանակը հասցրել է 317-ի՝ հաւասարուելով անգլիական «Դերբի» նախկին յարձակուող Ստիւէն Բուլմերին, փոխանցում է Mister Chip-ը:

30-ամեայ Ռոնալդուն Պրիմերայում խփել է 233 գոլ, իսկ Անգլիայի Պրիմեր լիգայում աչքի է ընկել 84 անգամ: Այդ ցուցակում նրան գերազանցում են միայն գերմանացի Գերդ Միւլլերն ու անգլիացի Զիմի Գրիւզը, իսկ «Բարսելոնայի» արգենտինացի յարձակուող Լիոնէլ Մեսին 288 գոլով 7-րդն է:

### ՀԵՆՐԻԽ ՄԻԻԹԱՐԵԱՆԻՆ ՃԱՆԱՉԵԼ ԵՆ «ՎԵՐԴԵՐ» ԵՒ «ԲՈՐՈՒՄԻԱ» ԽԱՂԻ ԼԱԲԱԳՈՅՆ ՖՈՒՏՊՈԼԻՍՏ

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միիթարեանը Goal.com-ի եւ Whoscored.com-ի վարկածով ճանաչուել է Գորտմունդի «Բորուսիայի» եւ Բրեմենի «Վերդերի» միջեւ Գերմանիայի առաջնութեան 11-րդ տուրի խաղի լաւագոյն ֆուտպոլիստ:

Whoscored-ը 26-ամեայ ֆուտպոլիստին տուել է 8.5 միաւոր, իսկ Goal.com-ը՝ 4.5 (5 բալլային համակարգով):

Յիշեցնենք, որ Հենրիխ Միիթարեանի գոլի եւ 2 կոլային փոխանցումների շնորհիւ «Բորուսիան» 3:1 հաշուով արտագնայ յաղթանակ էր տարել Բրեմենում:

### ԵՒՐՈՊԱՅԻ ԼԱԲԱԳՈՅՆ 5 ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԼԱԲԱԳՈՅՆ ՌՄԲԱՐԿՈՒՆԵՐԸ

1. Զիմի Գրիւզ (Անգլիա) - 366 գոլ
2. Գերդ Միւլլեր (Գերմանիա) - 365
- 3-4. Կրիշտիանու Ռոնալդու (Պորտուգալիա) - 317
- 3-4. Ստիւէն Բուլմեր (Անգլիա) - 317
5. Դիքսի Դին (Անգլիա) - 310
6. Դեյւիտ Օնիս (Արգենտինա/Իտալիա) - 299
7. Լիոնէլ Մեսի (Արգենտինա) - 288
8. Գորդոն Հոջսոն (Անգլիա/ՀԱՀ) - 287
9. Ալան Շիրեր (Անգլիա) - 283
10. Սիլվիո Պրոլա (Իտալիա) - 274

### ՅՈՒՐԱ ՍՈՎՍԻՍԵԱՆԸ ՅԱՋՈՐԴ ՇԱՐԱԹ ԿԸ ՎԵՐՍԿՍԻ ՄԱՐՁՈՒՄՆԵՐԸ

Մոսկուայի «Սպարտակի» գլխաւոր մարզիչ Դմիտրի Ալենիչեւն անդրադարձել է Հայաստանի հաւաքականի յարձակուող Յուրա Սովսիսեանին, որը շարունակում է վերականգնել վնասուածքից:

«Յուրա Սովսիսեանը յաջորդ շաբաթ կ'անցնի մարզումներին: Ռոմուլոն վաղը անհատական ծրագրով կը սկսի մարզուել խաղադաշտում, իսկ Մակիեւը վնասուածք ստացաւ այսօրուայ մարզմանը:

Կը շարունակեմ վստահել երիտասարդներին: «Ուրալի» դէմ խաղում նրանցից ոմանք կ'ընդգրկուեն մեկնարկային կազմում», - մարզիչը ասաց:




### ՀԱՅ ԵՎԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ

#### Շարունակուած էջ 15-էն

դիկուսը Սիսի իր Կաթողիկոսարանէն աքսորուեցաւ եւ հալածուեցաւ, որ իր Աթոռը վերակերտեց նախ Հալէպի եւ ապա Անթիլիասի մէջ: Բարգէն Կիւլէսէրեան, 1914 թուին երբ առաջնորդն էր Անկիւրիոյ թեմին, առողջական պատճառներով, երկամներէն մին պէտք է հանէին, ու թելադրած Ամերիկա երթալ եւ բուժուել: Ազատեցաւ վերահաս սպանդէն: Թորոքոմ Գուշակեան նոյն տարին հրաժարած ըլլալով Սեբաստիոյ թեմի առաջնորդութեանէն, եզրափոխի Առաջնորդ ընտրուած էր եւ Գահիրէ մեկնած: Նոյնպէս վերեւ յիշեալ հոգեւորականները պաշտօններու բերումով Օսմանեան Թուրքիոյ սահմաններէն դուրս մեկնած ըլլալով՝ ազատեցան: Բոլորն ալ ազատելով ձեռնապահ չեղան սակայն: Երբեք: Ընդհակառակը մեկնեցան Երուսաղէմ, եւ ապա Անթիլիաս ուր վերակերտեցին Աթոռներն ու Ընծայարանները: Անոնց կարգին նաեւ Գարեգին Պատրիարք Խաչատուրեան որ վերակերտեց Կ.Պոլսոյ Աթոռը, հիմնելով նաեւ Ս. Խաչ Դպրեմանքը, ինչպէս նաեւ Կարապետ Արք. Մազմեան, Յունաստանի առաջին Թեմակալ Առաջնորդը, եւ Մկրտիչ Արքեպս. Աղաւնուներ որ Երուսաղէմ մնալով պատմաբանի իր կարեւոր բաժինը բերաւ Ս. Աթոռին: Կ'ուզեմ ցոյց տալ տասնեակ մը լուսապատկերներ ի պատիւ վերապրող այդ քաջարի հոգեւորականներուն:

### ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ ՆՈՒԱՃԱԾ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՐԴԻՆԵԱՆ. ՈՒՐԱՆՈՒԹԻՒՆՍ ԿՐԿՆԱԿԻ Է

Ուրախութիւնս երկու անգամ աւելի շատ է, քանի որ 2 նուաճումներն էլ շատ լուրջ են: Կարիերայումս առաջին անգամ աշխարհի առաջնութիւնում արժանացայ մետալի: Բացի այդ, առաջին անգամ նուաճեցի Օլիմպիական խաղերի ուղեգիր եւ կը մասնակցեմ Ռիօ-2016-ին:



Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում Գլազգոյից ասաց Յարութիւն Մերդինեանը, որը Շոտլանդիայի մայրաքաղաքում անցկացուող սպորտային մարմնամարզութեան աշխարհի առաջնութեան նժոյգի թափեր վարժութիւնում նուաճած պրոնզէ մետալի շնորհիւ ապահովել էր Ռիօ Տը Ժանէրոյում կայանալիք 2016թ. ամառային Օլիմպիական խաղերի ուղեգիր: Հոկտեմբերի 31-ին կայացած եզրափակիչներին մասնակցել էր նաեւ Վահագն Դաւթեանը, որը 7-րդ տեղն էր գրաւել օղակների վարժութիւնում:

### ԼԵՒՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՊԱՅՊԱՆԵԼ Է 7-ՐԴ ՏԵՂԸ

Հայկական ճատրակի առաջատար Լեւոն Արոնեանը ճատրակի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) դասակարգման աղիւսակում պահպանել է 7-րդ տեղը: Հայ գրոսմայստերի վարկանիշը 2781 է:

ՖԻԴԵ-ի առաջատարը դարձեալ աշխարհի ախոյեան Մագնուս Կարլսենն է, որին յաջորդում են բուլղարացի Վեսելին Տոպալովն ու հնդիկ Վիշվանաթան Անանդը, իսկ ռուս Վլադիմիր Կրամնիկը բարձրացել է չորրորդ տեղ:

100 լաւագոյն գրոսմայստերների ցուցակում տեղ են գտել Հայաստանի հաւաքականի եւս 2 ներկայացուցիչներ, որոնք զգալիօրէն առաջադիմել են: Գաբրիէլ Սարգսեանը 52-րդն է, իսկ Սերգէյ Մովսէսեանը՝ 76-րդը:

ՖԻԴԵ, Նոյեմբերի դասակարգման աղիւսակ

1. Մագնուս Կարլսեն (Նորվեգիա) - 2850 վարկանիշ
  2. Վեսելին Տոպալով (Պուլկարիա) - 2803
  3. Վիշվանաթան Անանդ (Հնդկաստան) - 2803
  4. Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան) - 2796
  5. Հիկարու Նակամուրա (ԱՄՆ) - 2793
  6. Ֆաբիանո Կարուանա (ԱՄՆ) - 2787
  7. Լեւոն Արոնեան (Հայաստան) - 2781
  8. Դին Լիրեն (Չինաստան) - 2781
  9. Անիշ Գիրի (Հոլանդիա) - 2778
  10. Ուեսլի Սո (ԱՄՆ) - 2774
- 52 (62). Գաբրիէլ Սարգսեան - 2689  
76 (88). Սերգէյ Մովսէսեան - 2666

### Համակարգային Փոփոխութիւն Տանող

#### Շարունակուած էջ 2-էն

Ինչ խօսք, աւելորդ է ասել, որ իտալական տարբերակը բոլոր ընդդիմադիր ուժերի միաւորումը, միասնական պայքարն է, որը անխուսափելիօրէն կը բերի յաջողութեան: Բայց դա իտէալ է, որը գործնականում անհնար է եւ նաեւ օբիեկտիւօրէն անհնար է: Հետեւաբար յաջորդ օբիեկտիւ իրականութիւնը դառնում է գոնէ ընդդիմադիր ուժերի շրջանում մրցակցութիւնը՝ սեփական առաջարկներով հանրութեան համակրանքը վայելելու հարցում: Առաջին հայեացքից թոււում է, որ միմեանց հետ մրցելով, ընդդիմադիր ուժերը ընդամէնը հեշտացնում են իշխանութեան գործը:

Առաջին հայեացքից դա իսկապէս այդպէս է: Բայց, մեծ հաշուով, խորքային իմաստով, այլ զարգացում ընդդիմադիր դաշտում չկայ եւ չի կարող լինել՝ կ'ամ իդէալում միասնութիւն, կ'ամ էլ մրցակցութիւն, բայց արդէն ոչ թէ կեանքի ու մահուան, այլ գաղափարների, մեխանիզմների, առաջարկների, որոնք առաջ կը բերեն մրցակցային միջավայր եւ ընդդիմադիր ուժերի համար մոտիւացիա կ'առաջացնեն իրենք իրենց վրայ աշխատելու, տեխնոլոգիական, մեթոդաբանական աճի ուղղութեամբ աշխատելու, կատարելագործուելու, չճահճանալու: Եւ այդ մրցակցութեան էֆեկտը կը լինի քաղաքականութեան հանդէպ,

քաղաքական գործընթացի հանդէպ հանրային հետաքրքրութեան աճը: Դա, իհարկէ, ժամանակատար գործընթաց է, բայց կ'այլ ալընտրանք, եթէ որեւէ այլ գործընթաց չի ստացուում ու չի ստացուում ակնյայտօրէն օբիեկտիւ իրողութիւնների հետեւանքով, որքան էլ կան նաեւ իշխանութեան սուբիեկտիւ միջամտութիւնները:

Ի վերջոյ, ձեւաւորելով հանրութեան վստահութեան եւ համակրանքի համար այդ օբիեկտիւ եւ փոխհամաձայնեցուած մրցակցութեան մշակոյթը եւ քաղաքական նոր գործընթացը՝ թէկուզ ընդդիմադիր դաշտում, ընդդիմադիր ուժերը կարող են երկու կարեւոր բան. նախ հանրութեանը գործնականում ցոյց տալ, որ ունակ են իշխանութիւնից տարբեր եւ մի քանի գլուխ բարձր որակով ու մշակոյթով համակեցութեան, քաղաքական մրցակցութիւնը հանդուրժելուն, եւ երկրորդ՝ այդպիսով կարող են զուտ ֆիզիքական միասնութեան խնդիրը տեղափոխել արդէն համակարգային միասնութեան դաշտ եւ դրանով իսկ տեխնոլոգիական կամ մեթոդաբանական առումով միասնութեան վերացական եւ հռչակագրային գաղափարը բերել հողեղէն վիճակի կամ այսպէս ասած՝ դնել գետնի վրայ, կատարելով Հայաստանում համակարգային փոփոխութեան ուղղուած եզակի գործնական քայլ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»